ԱՄՆ ԱԽԱՏԱՆՔԸ

ՆԱԽԱԳԱՀԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՆԱԽԱԲԱՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, հաճախ անվանվում է Միացյալ Նահանգներ կամ պարզապես Ամերիկա (անգլ.՝ United States of America), դաշնային սահմանադրական հանրապետություն Հյուսիսային Ամերիկայում, որը բաղկացած է որոշակի ինքնավարություն ունեցող 50 նահանգներից, որոնք իրականում կիսանկախ պետություններ են (ինչն արտահայտված է նրանց պաշտոնական անունների մեջ. օրինակ՝ Կալիֆոռնիան կոչվում է Կալիֆոռնիա Հանրապետություն և դա այժմ էլ գրված է նրա դրոշի վրա), և դաշնային նշանակության Կոլումբիա շրջանից: Ամերիկայի Միացյալ Նահանգները հյուսիսում սահմանակցում է Կանադային, հարավում՝ Մեքսիկային, ինչպես նաև՝ ծովային սահման ունի Ռուսաստանի հետ: Ամերիկյան երկու նահանգներ ցամաքային սահման չունեն երկրի հիմնական տարածքի հետ: Դրանք են՝ Ալյասկան՝ Հյուսիսային Ամերիկայի հյուսիսարևմտյան հատվածում, և Հավայան կղզիները՝ Խաղաղ օվկիանոսում:

Ամերիկայի Միացյալ Նահանգները ստեղծվել է բրիտանական տասներեք գաղութների միավորման հետևանքով՝ 1776 թվականի հուլիսի 4-ին: Այն կարելի է համարել Ամերիկայի ազգային-ազատագրական պայքարում տոնած հաղթանակի գլխավոր հետևանքներից մեկը: 1787 թվականին ընդունվեց ամերիկյան սահմանադրությունը, որն իր տեսակով առաջինն էր մարդկության

պատմության մեջ: Նույն տարում ԱՄՆ-ի առաջին նախագահ ընտրվեց ազատագրական շարժման ականավոր գործիչ Ջորջ Վաշինգտոնը: 1865 թվականի դեկտեմբերի 18-ին Ամերիկայում վերացվեց ստրկությունը: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Ամերիկայի Միացյալ Նահանգները սկսեց անդամակցել Ազգերի լիգային և Միջազգային արդարադատության մշտական պալատին: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հակահիտլերյան խմբավորմանն օժանդակելը բարձրացրեց ԱՄՆ-ի հեղինակությունը Եվրոպայում, իսկ ռազմական գործողությունների ավարտից հետո վերջինս դարձավ կապիտալիստական աշխարհի կորիզը: 1945 թվականին ԱՄՆ-ն դարձավ առաջին միջուկային տերությունն աշխարհում:

Ամերիկայի Միացյալ Նահանգները ներկայումս զբաղեցնում է 9,826,675 կմ² տարածք (4-րդն աշխարհում) և ունի 322 370 752 մարդ (ըստ 2015 թվականի նախահաշվարկի) բնակչություն (3-րդն աշխարհում): Լայնամասշտաբ ներգաղթի պատճառով այն աշխարհի ամենաբազմազգ պետություններից մեկն է: Մայրաքաղաքը Վաշինգտոնն է, խոշորագույն քաղաքը՝ Նյու Յորքը: Նյու Յորքից բացի, երկրի տարածքում կան 9 քաղաքներ ևս, որոնց բնակչությունը գերազանցում է մեկ միլիոնը: Դրանք են Լոս Անջելեսը, Չիկագոն, Հյուստոնը, Ֆինիքսը, Ֆիլադելֆիան, Սան Անտոնիոն, Սան Դիեգոն, Դալասը և Սան Խոսեն: Պետական լեզուն անգլերենն է, որն այստեղ տարածվել է գաղութային տարիներին:

Միացյալ Նահանգները ժամանակակից աշխարհի տնտեսական, քաղաքական և ռազմական ամենահզոր ուժն է: Համախառն Ներքին Արդյունքի գրեթե 1/4 մասը ստեղծվում է ԱՄՆ-ում: Արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի ծավալով և արտահանմամբ, արտաքին առևտրի շրջանառության ծավալով, կապիտալի արտահանմամբ, գիտատեխնիկական

ներուժով և սպասարկման ոլորտի զարգացման մակարդակով աշխարհի առաջատար տերությունն է: Ամերիկայի Միացյալ Նահանգների տնտեսությանը բնորոշ է արտադրության և կապիտալի համակենտրոնացման բարձր աստիճանը: Աշխարհի բոլոր երկրներից առաջինը հետարդյունաբերական փուլ թևակոխած այս երկրում ծառայություններ մատուցող ճյուղերի բաժինը համախառն ներքին արդյունքում կազմում է մոտ 80 %, իսկ արտադրական ոլորտին բաժին է ընկնում ընդամենը 20 %:

Ամերիկայի Միացյալ Նահանգները ներկայումս անդամակցում է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդին, Հյուսիսատլանտյան դաշինքին, Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությանը և այլ միջազգային կազմակերպությունների:

Ինչո՞վ են հայտնի ԱՄՆ նախագահները:

«Աստվածավախ և լակոնիկ»

ԱՄՆ առաջին նախագահը Ջորջ Վաշինգտոնն է: Նա է սկիզբ դրել Աստվածաշնչով երդվելու ավանդույթին: Երդմնակալության արարողությունից հետո Վաշինգտոնն ավելացրել է «Եվ թող Աստված օգնի ինձ» արտահայտությունը, որը ներառվել է երդման խոսքում: Վաշինգտոնը հիշվում է իր ամենակարճ ելույթով, ընդամենը՝ 135 բառ:

«Անհաջողակ հռետորը»

Նախագահ Ուիլյամ Հենրի Հարիսոնը, որը ԱՄՆ-ի 9-րդ նախագահն է, հայտնի է դարձել երդմնակալության ամենաերկար ելույթով, որը տևել է 1 ժամ 45 րոպե: Այդ ժամանակ առատ ձյուն էր գալիս, իսկ Հարիսոնը փողոցում կանգնել էր առանց վերարկուի: Նորընտիր նախագահը մեկ ամիս անց մահացավ թոքերի

բորբոքումից։ Կենսագիրները նշում են, որ նա մրսել էր երդման արարողության ժամանակ։

«Բարձրահասակ նախագահը»

ԱՄՆ-ի 16-րդ նախագահ Աբրահամ Լինկոլնը պետության առաջին ղեկավարն է, որն իր երդմնակալության արարողությանն ընդգրկել է նաև աֆրոամերիկացիներին։ Պատմության մեջ մտել է որպես ամենաբարձրահասակ նախագահ։ Նրա հասակը կազմել է 193 սմ։

«Անուսը, որի բախտը բերել էր կնոջ հարցում»

ԱՄՆ-ի 17-րդ նախագահ Էնդրյու Ջոնսոնը երբեք չի սովորել դպրոցում, իսկ նախագահի պաշտոնը զբաղեցրել է խելացի կնոջ՝ Էլիզ Մարադլ-Ջոնսոնի շնորհիվ։ Նա դարձել է ԱՄՆ-ի առաջին փոխնախագահը, որը երդմնակալության արարողության ժամանակ ելույթ է ունեցել ոչ սթափ վիճակում։

«Նրան Գրովեր կասեն»

Գրովեր Քլիվլենդը դարձել է ԱՄՆ-ի միակ նախագահը, որը երկու անգամ է ընտրվել ԱՄՆ-ի նախագահի պաշտոնում։ Նա եղել է Ամերիկայի 22-րդ և 24-րդ նախագահը։

«Հին կովբոյը»

ԱՄՆ-ի ամենատարեց առաջնորդը եղել է 40-րդ նախագահ Ռոնալդ Ռեյգանը, որը երդմնակալության արարողության ժամանակ 69 տարեկան է եղել։

«Ամենաերիտասարդը»

ԱՄՆ-ի ամենաերիտասարդ նախագահը դարձել է 26-րդ նախագահ Թեոդոր Ռուզվելը։ Երդմնակալության արարողության պահին նա եղել է 42 տարեկան։

«Ծանրակշիռ նախագահը»

ԱՄՆ-ի պատմության մեջ բառի բուն իմաստով ամենածանր նախագահը եղել է Ուիլյամ Հովարդ Թափթը (27-րդը)։ Նա կշռել է 135 կգ։

«Գաճաճը ճնշում էր ինտելեկտով»

ԱՄՆ-ի ամենացածրահասակ առաջնորդը եղել է 4-րդ նախագահ Ջեյմս Մեդիսոնը (1809-1817թթ.), նրա հասակը կազմել է 163 սմ։ Նրա IQ-ն մյուս նախագահներից ամենաբարձրն է եղել։

«Ավելի լավ է՝ բանաստեղծ լիներ»

Միակ նախագահը, որը գրականության ասպարեզում աչքի է ընկել իր մի քանի վեպով, եղել է 39-րդ նախագահ Ջիմի Քարտերը (1977-1981թթ.)։

«Նա դաղստանցի՞ է»

ԱՄՆ-ի ամենաբազմազավակ նախագահը եղել է Ջոն Թայլերը։ Նա առաջին ամուսնությունից ունեցել է 8 երեխա, երկրորդից՝ 7։ Թայլերի 15-րդ երեխան ծնվել է այն ժամանակ, երբ նա արդեն 70 տարեկան է եղել։

«Ամերիկյան կապիտան Նեմոն»

Հարի Թրումենը՝ ԱՄՆ-ի 33 նախագահը, դարձել է առաջին նախագահը, որի երդմնակալության արարողությունը հեռարձակվել է հեռուստատեսությամբ 1949թ-ին։ Նա նաև առաջին նախագահն է եղել, որը սուզանավ է նստել։

«Երկկենցաղ նախագահը»

ԱՄՆ-ի 6-րդ նախագահ Ջոն Քուինսի Ադամսը շատ է սիրել մերկ լողալ Պոտոմակ գետում, ընդ որում՝ առավոտյան ժամերին։

«Պարզապես ֆեմինիստ»

ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնն առաջինն է եղել, որը երդմնակալության շքերթում ներառել է կանանց։ Նա նաև հայտնի է

որպես պատմաբան և քաղաքագետ։1919թ-ին Վիլսոնը դարձել է խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր։

«Բնածին ընթերցողը»

Ջիմի Քարտերը՝ ԱՄՆ-ի 39-րդ նախագահը, միակ ամերիկյան առաջնորդն է եղել է, որը Կապիտոլիում է գնացել ոտքով։ Նա պատմության մեջ մտել է որպես ամենաարագ ընթերցող նախագահ։ Քարտերը մեկ րոպեում կարողանում էր 2000 բառ կարդալ։

«Դե, հուզվում էր...»

Բացի այն, որ ԱՄՆ-ի 44-րդ նախագահ Բարաք Օբաման առաջին սևամորթ նախագահն էր, նա նաև պատմության մեջ է մտել մեկ այլ պատճառով. Օբաման երկու անգամ է կրկնել երդումը սխալի պատճառով։

ԱՄՆ-Ի ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՄՆ-ի նախագահների ցանկում ընդգրկված են միայն այն անձինք, որոնք զբաղեցրել են ԱՄՆ-ի նախագահի պաշտոնը սահմանադրության վավերացումից հետո, որն ստորագրվել է 1789 թվականին։

Գույները նշանակում են յուրաքանչյուր նախագահի կուսակցությունը։

- Անկուսակցական
- ֆեդերալիստ
- Դեմոկրատ-Հանրապետական
- Դեմոկրատ
- Վիգ
- Հանրապետական

№	Նախագահ	Ստանձնեց պաշտոնը	Լքեց պաշտոնը	Կուսակցություն	Փոխնախագահ	Ծանոթ
1	Ջորջ Վաշինգտոն	ապրիլ 30 1789	մարտ 4 1797	Անկուսակցական	Ջոն Ադամս	1 2
2	Ջոն Ադամս	մարտ 4 1797	մարտ 4 1801	ֆեդերալիստ	Թոմաս Ջեֆերսոն	3
3	Թոմաս Ջեֆերսոն	մարտ 4 1801	մարտ 4 1809	Դեմոկրատ-Հանրապետական	Ահարոն Բուռ	4
					Ջորջ Քլինտոն	5
4	Ջեյմս Մեդիսոն	մարտ 4 1809	մարտ 4 1817	Դեմոկրատ-Հանրապետական	Ջորջ Քլինտոն *չգրաղեցրած*	6
					Էլբրիջ Գերի *չգրաղեցրած*	7
5	Ջեյմս Մոնրո	մարտ 4 1817	մարտ 4 1825	Դեմոկրատ-Հանրապետական	Դենիել Թոմպկինս	8 9
6	Ջոն Քվինսի Ադամս	մարտ 4 1825	մարտ 4 1829	Դեմոկրատ-Հանրապետական	Ջոն Քալդվել Քալհուն	10
7	Էնդրյու Ջեքսոն	մարտ 4 1829	մարտ 4 1837	Դեմոկրատ	Ջոն Քալդվել Քալհուն *չգրաղեցրած*	11
					Մարտին Վան Բյուրեն	12
8	Մարտին Վան Բյուրեն	մարտ 4 1837	մարտ 4 1841	Դեմոկրատ	Ռիչարդ Ջոնսոն	13
9	Ուիլյամ Հարիսոն	մարտ 4 1841	ապրիլ 4 1841[1]	Վիգ	Ջոն Թայլեր	14
10	Ջոն Թայլեր	ապրիլ 4 1841	մարտ 4 1845	Վիգ Անկուսակցական	*չգրաղեցրած*	

11	Ջեյմս Նոքս Փոլկ	մարտ 4 1845	մարտ 4 1849	Դեմոկրատ	Ջորջ Միֆլին Դալլաս	15
12	Զաքարի Թեյլոր	մարտ 4 1849	հուլիս 9 1850[1]	Վիգ	Միլլարդ Ֆիլմոր	16
13	Միլլարդ Ֆիլմոր	հուլիս 9 1850	մարտ 4 1853	Վիգ	*չզբաղեցրած*	
14	Ֆրանկլին Փիրս	մարտ 4 1853	մարտ 4 1857	Դեմոկրատ	Վիլյամ Ռուֆուս դեՎեյն Քինգ *չզբաղեցրած*	17
15	Ջեյմս Բյուքենեն	մարտ 4 1857	մարտ 4 1861	Դեմոկրատ	Բրեքինրիջ	18
16	Աբրահամ Լինկոլն	մարտ 4 1861	ապրիլ 15 1865	Հանրապետական Ազգային Միություն	Հանիբալ Համլին	19
					Էնդրյու Ջոնսոն	20
17	Էնդրյու Ջոնսոն	ապրիլ 15 1865	մարտ 4 1869	Դեմոկրատ Ազգային Միություն	*չզբաղեցրած*	
18	Ուլիս Գրանտ	մարտ 4 1869	մարտ 4 1877	Հանրապետական	Շույլեր Քոլֆաքս	21
					Հենրի Վիլսոն *չզբաղեցրած*	22
19	Ռութերֆորդ Բիրչարդ Հեյս	մարտ 4 1877	մարտ 4 1881	Հանրապետական	Վիլյամ Ալմոն Վիլեր	23
20	Ջեյմս Գարֆիլդ	մարտ 4 1881	սեպտեմբեր 19 1881	Հանրապետական	Չեսթեր Ալեն Արտուր	24
21	Չեսթեր Ալեն Արթուր	սեպտեմբեր 19 1881	մարտ 4 1885	Հանրապետական	*չզբաղեցրած*	
22	Սթիվեն Գրովեր Կլիվլենդ	մարտ 4 1885	մարտ 4 1889	Դեմոկրատ	Թոմաս Էնդրյու Հենդրիկս *չզբաղեցրած*	25
23	Բենջամին Հարրիսոն	մարտ 4 1889	մարտ 4 1893	Հանրապետական	Լեվի Պարսոնս Մորթոն	26

24	Սթիվեն Գրովեր Կլիվլենդ *(2-րդ ժամկետը)*	մարտ 4 1893	մարտ 4 1897	Դեմոկրատ	Էդլայ Յուինգ Սթիվենսոն	27
25	Ուիլիամ Մաք-Քինլի	մարտ 4 1897	սեպտեմբեր 14 1901	Հանրապետական	Գառեթ Հոբարտ *չգրաղեցրած*	28
					Թեոդոր Ռուզվելտ	29
26	Թեոդոր Ռուզվելտ	սեպտեմբեր 14 1901	մարտ 4 1909	Հանրապետական	*չգրաղեցրած*	
					Չարլզ Վորեն Ֆեյրբենկս	30
27	Ուիլյամ Տաֆտ	մարտ 4 1909	մարտ 4 1913	Հանրապետական	Ջեյմս Սքուլկրաֆտ Շերման *չգրաղեցրած*	31
28	Վուդրո Վիլսոն	մարտ 4 1913	մարտ 4 1921	Դեմոկրատ	Թոմաս Ռայլի Մարշալ	32
						33
29	Ուորեն Հարդինգ	մարտ 4 1921	օգոստոս 2 1923	Հանրապետական	Քալվին Քուլիջ	34
30	Քալվին Քուլիջ	օգոստոս 2 1923	մարտ 4 1929	Հանրապետական	*չգրաղեցրած*	
					Չարլզ Գեյտս Դավես	35
31	Հերբերտ Հուվեր	մարտ 4 1929	մարտ 4 1933	Հանրապետական	Չարլզ Քրտիս	36
32	Ֆրանկլին Դելանո Ռուզվելտ	մարտ 4 1933	ապրիլ 12 1945[1]	Դեմոկրատ	Ջոն Նանս Գարներ	37
						38
					Հենրի Ազարդ Վոլոս	39
					Հարի Թրումեն	40
33	Հարի Թրումեն	ապրիլ 12 1945	հունվար 20 1953	Դեմոկրատ	*չգրաղեցրած*	
					Ալբեն Բարկլի	41
34	Դուայթ Էյզենհաուեր	հունվար 20 1953	հունվար 20 1961	Հանրապետական	Ռիչարդ Նիքսոն	42
						43
35	Ջոն Ֆիցջերալդ	հունվար	նոյեմբեր	Դեմոկրատ	Լինդոն Բեյնս	44

	Քենեդի	20 1961	22 1963		Ջոնսոն	
36	Լինդոն Բեյնս Ջոնսոն	նոյեմբեր 22 1963	հունվար 20 1969	Դեմոկրատ	*չզբաղեցրած*	
					Հյուբերտ Համֆրի	45
37	Ռիչարդ Նիքսոն	հունվար 20 1969	օգոստոս 9 1974[2]	Հանրապետական	Սպիրո Ագնյու	46
					Սպիրո Ագնյու *չզբաղեցրած* Ջերալդ Ֆորդ	47
38	Ջերալդ Ֆորդ	օգոստոս 9 1974	հունվար 20 1977	Հանրապետական	*չզբաղեցրած* Նելսոն Ռոկֆելեր	
39	Ջիմի Կարտեր	հունվար 20 1977	հունվար 20 1981	Դեմոկրատ	Վոլտեր Մոնդեյլ	48
40	Ռոնալդ Ռեյգան	հունվար 20 1981	հունվար 20 1989	Հանրապետական	Ջորջ Բուշ	49
						50
41	Ջորջ Բուշ	հունվար 20 1989	հունվար 20 1993	Հանրապետական	Դեն Քվեյլ	51
42	Բիլ Քլինթոն	հունվար 20 1993	հունվար 20 2001	Դեմոկրատ	Ալբերտ Գոռ	52
						53
43	Ջորջ Բուշ	հունվար 20 2001	հունվար 20 2009	Հանրապետական	Դիկ Չեյնի	54
						55
44	Բարաք Օբամա	հունվար 20 2009	հունվար 20 2017	Դեմոկրատ	Ջո Բայդեն	56
						57
45	Դոնալդ Թրամփ	հունվար 20 2017	հունվար 20 2021	Հանրապետական	Մայք Փենս	51
46	Ջո Բայդեն	հունվար 20 2021	-	Դեմոկրատ	Քամալա Հարիս	59

ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՋՈՐՋ ՎԱՇԻՆԳՏՈՆ

Ջորջ Վաշինգտոնը Ամերիկայի Միացյալ Նահանգների առաջին նախագահն է: Նա ծնվել է գաղութային Ամերիկայի Վիրջինիայի Վեսթմորլանդ քաղաքում 1732 թվականի փետրվարի 22-ին: 1754-1758 թվականներին ծառայել է բանակում: 23տարեկանում նա Վիրջինիայի բոլոր զինվորների գնդապետն էր: Ակտիվ է եղել Ֆրանսիական և Հնդկական պատերազմներին որը տեղին է ունեցել 1754 -1763 թվականներին: Վաշինգտոնը ազարակատեր էր և տեղագիր: Նա առաջնորդել է զինվորներին Ամերիկայի հեղափոխական պատերազմի ժամանակ:Պատերազմի ընթացքում Վաշինգտոնը 1789 թվականին ընտրվել է Ամերիկայի առաջին նախագահ: Վաշինգտոնը շարունակել է նախագահությունը 1789-1797 թվականներին: Թոշակի է անցել Մաունթ Վերնոնում: Ջորջ Վաշինգտոնը մահացել է 1799 թվականին դեկտեմբերի 14-ին:

ՋՈՆ ԱԴԱՄՍ

Ադամսը ծնվել է 1735 թվականին Քուինսի քաղաքում,ֆերմերայի ընտանիքում: Նրա երիտասարդությունը համընկնեց Բրիտանական իշխանության հետ:1735թվականին Ադամսը ավարտեց Հարվանդը:Նրա սիրած գիտությունը դարձավ լեզուներ, հատկապես լատիներեն: Կրթությունը կատարեց իր աշխատանքը,Ադամը հրաժարվեց կարիերայից, որը կարող էր փայլել քոլեջում: Ջոն Ադամսը հայտնի է որպես ԱՄՆ երկրորդ նախագահ ով կառավարել է 1797-1801թ.թ: Հեղափոխությունից հետո Ադամսը դարձավ հայտնի հասարակական գործիչ և պաշտոնյա:Նախագահի հրաժարականից հետո Ադամսը դադարեց զբաղվել քաղաքակրթությամբ: Ջոն Ադամսը մահացել է հուլիսի 4-ին, Անկախության Հռչակագրի ընդունումից ուղիղ 50 տարի անց:

ԹՈՄԱՍ ՋԵՖԵՐՍՈՆ

Թոմաս Ջեֆերսոնը ծնվել է ապրիլի 2-ին 1743 թվականին Բրիտանական կայսրությունում: Մասնակցել է ԱՄՆ անկախության պատերազմին, Անկախության հռչակագրի հեղինակներից է, ԱՄՆ-ի 3-րդ նախագահն է կառավարել է 1801 - 1809 թթ., ԱՄՆ հիմնադիրներից մեկն է, քաղաքական գործիչ, դիպլոմատ և փիլիսոփա: Ջեֆերսոնը ամերիկյան բուրժուական հեղափոխության արմատական-ժողովրդավարական գաղափարախոսն է, բնական իրավունքի, հասարակական դաշինքի տեսության, գաղութների և մայր երկրի՝ մետրոպոլիայի, բնակիչների հավասարության պաշտպանը: Վախճանվել է հուլիսի 4-ին 1826 թվականին Շառլոտավիլում

ՋԵՅՄՍ ՄԵԴԻՍՈՆ

Ջեյմս Մեդիսոնը ծնվելէ մարտի 16-ին 1751թվականին Բրիտանական կայրությունում: 1771 թ. ավարտել է Նյու-Ջերսիի քոլեջը: Ընտրվել է Վիրջինիայի կոնվենտի պատգամավոր, ակտիվորեն մասնակցել է նահանգի սահմանադրության մշակմանը: 1787 թ. Մեդիսոնը ընտրվել է Սահմանադրական կոնվենտի անդամ: 90-ականների սկզբից նա աստիճանաբար անցել է հանրապետականության դիրքորոշմանը: Ջեֆերսոնի կառավարությունում զբաղեցրել է պետական քարտուղարի պաշտոնը, իսկ 1808 և 1812 թթ. ընտրվել է ԱՄՆ նախագահ: Պաշտոնաթողությունից հետո Մեդիսոնը հիմնել է գաղութաբնակեցման Ամերիկյան ընկերակցությունը, մասնակցել երկրի հարավում ստրկության հիմնահարցի փուլային լուծմանը, իսկ Թոմաս Ջեֆերսոնի մահից հետո՝ դարձել Վիրջինիայի համալսարանի ռեկտոր: Վախճանվել է հունիսի 28-ին, 1836 թվականին Մոնպելյեում:

ՋԵՅՄՍ ՄՈՆՐՈ

Ջեյմս Մոնրոն ծնվել է 1758 թ. Ապրիլի 28-ին և մեծացել է Վիրջինիայում: Նա համեմատաբար լավ տնկիչի որդին էր: Նրա մայրը մահացել է 1774 թվականը, իսկ հայրը մահացել է երբ Ջեյմսը 16 տարեկան էր: Մոնրոն ժառանգեց իր հոր ունեցվածքը: Նա սովորել է Քեմփբելբաուտի ակադեմիայում, այնուհետեւ գնացել Ուիլիամ և Մերիի քոլեջ: Նա հրաժարվեց միանալ Կոնտինենտալ բանակին և պայքարել ամերիկյան հեղափոխության դեմ: Հետագայում նա սովորեց օրենքը, Թոմաս Ջեֆերսոնի անվան տակ:Ջեյմս Մոնրոն Ամերիկայի 5-րդ նախագահը կառավարել է 1817-1825 թվականներին:Մահացել է հուլիսի 4-ին Ամերիկայի անկախության 55-ամյակին:

ՋՈՆ ՔՎԻՆՍԻ ԱԴԱՄՍ



Ջոն Քվինսի Ադամսը ծնվել է 1767 թվականին Բրեյնթրիում : Ջոն Քվինսի Ադամսը երկու անգամ հորն ուղեկցել է Եվրոպա, երիտասարդությունն անցկացրել է Փարիզում, Հաագայում և Անգլիայում: Այս ճամփորդությունների շնորհիվ նա ստացավ մեծ գիտելիքների

պաշար, որը հետագայում նրան դարձրեց ԱՄՆ-ում ամենավառ արտաքին քաղաքական գործիչներից մեկը։Վախճանվել է փետրվարի 23-ին 1848թվականին 80 տարեկանում Կոլումբիայի շրջանում:

ԷՆԴՐՅՈՒ ՋԵՔՍՈՆ

Էնդրյու Ջեքսոնը ծնվել է 1767 թվականին մարտի 15-ին գաղութաբնակների ընտանիքում, որոնք ունեին շոտլանդական և իռլանդական արմատներ։ Էնդրյու և Էլիզաբեթ Հաթչինսոն Ջեքսոնը ԱՄՆ էին գաղթել Իռլանդիայից իրենց որդի Էնդրյուի ծնունդից երկու տարի առաջ։ 1828 թվականին Ադամսի ղեկավարման ժամկետի լրանալուց հետո Ջեքսոնը կրկին պայքարի մեջ մտավ ԱՄՆ նախագահ դառնալու համար և այս անգամ ընտրվեց։ Նրա կառավարման ժամանակը լիակատար հաղթանակ էր Դեմոկրատական կուսակցության համար, որի առաջնորդն էր Ջեքսոնը։ Էնդրյու Ջեքսոնը վախճանվել է հունիսի28-ին 1845թվականին78 տարեկանում Դավիդյան շրջանում:

ՄԱՐՏԻՆ ՎԱՆ ԲՅՈՒՐԵՆ



Մարտին Վան Բյուրենը ծնվել է դեկտեմբերի 5-ին 1782 թվականին Նյու Յորք նահանգի Քինդերուկ գյուղում՝ գյուղացու ընտանիքում: Նրա հայրը պանդոկատեր էր և ստրուկների սեփականատեր: Վան Բյուրենը ԱՄՆ-ի միակ նախագահն էր, ում մայրենի լեզուն անգլերենը չէր այլ հոլանդերեն: Բացի այդ, Վան Բյուրենը առաջին նախագահն էր, որը ծնվել է անկախ Միացյալ Նահանգներում: 1821 թվականին Վան Բյուրենը դարձել է Նյու Յորք նահանգի սենատորը, որը ներկայացնում էր Դեմոկրատական հանրապետական կուսակցությունը: Այստեղ Բյուրենը դեմ էր բարձր պաշտոնի պարտականությո համակարգին՝ աջակցելով սեփականություն հանդիսացող հողերը վաճառելու կամ վերադարձնելու համապատասխան նահանգներին:Նա ստանձնեց պաշտոնավարումը 1837 թվականի մարտին: Առաջին բանը, որ Վան Բուրենը կատարեց՝ դադարեցրեց ֆինանսական դժվարությունները, որոնք հասել էին Ջեքսոնի կառավարման վերջին տարիների:Վախճանվել է հուլիսի 24-ին 1862թվականին 79 տարեկանում:

ՈՒԻԼՅԱՄ ՀԱՐԻՍՈՆ

Ուիլյամ Հարիսոնը մեծացել է հարուստ ընտանիքի մի մասը Վիրջինիա նահանգի Չարլզ Սիթի շրջանում գտնվող տնկարկներից մեկում: Նա ուներ վեց եղբայր և քույր: Նրա հայրը՝ Բենիամին Հարիսոն V- ը, մայրցամաքային կոնգրեսի պատվիրակ էր և ստորագրեց այդ փաստաթուղթը Անկախության հռչակագիր, Նրա հայրը որոշ ժամանակ նաև Վիրջինիայի նահանգապետ էր:Ուիլյամը հաճախում էր տարբեր դպրոցներ և սովորում էր բժիշկ դառնալու համար, երբ հայրը մահացավ: Հոր մահից հետո Ուիլյամը սպառեց միջոցները և որոշեց միանալ բանակին: Նա նշանակվեց Հյուսիսարևմտյան երկրամաս՝ օգնելու հյուսիսարևմտյան հնդկական պատերազմում պայքարել բնիկ ամերիկացիներին:

ՋՈՆ ԹԱՅԼԵՐ

Ջոն Թայլերը ծնվել է 1790 թվականի մարտի 29-ին Վիրջինիայում, որտեղ իր հայրը՝ Ջոն Թայլերը, 1809-1811 թվականներին եղել է նահանգապետ, այնուհետև՝ Վիրջինիայի դաշնային դատարանի դատավոր:
Ջոնը սովորել է իրավաբանություն և 1816-1821 թվականներին եղել է Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի անդամ: 1825-1827 թվականներին եղել է Վիրջինիայի նահանգապետ, իսկ 1827-1836

թվականներին՝ նույն նահանգի սենատոր:1841 թվականի մարտի 4-ին ընտրվել է փոխվարչապետ: Նույն թվականի ապրիլի 4-ին՝ նախագահ Վ. Հարիսոնի մահից հետո, դարձել է նախագահ: Թայլերը շարունակեց կառավարել մինչև 1845 թվականը՝ կոնգրեսի հետ թշնամական հարաբերություններ ունենալով: Նախագահության ավարտից հետո նա վերադարձավ Վիրջինիա: Թայլերը ամուսնացել է երկու անգամ:

ՋԵՅՄՍ ՆՈՔՍ ՓՈԼԿ

Ջեյմս Նոքս Փոլկի նախնիները եղել են շոտլանդացիներ: Մորական կողմից նա համարվում է 16-րդ դարի շոտլանդական կրոնական ռեֆորմատոր Ջոն Նոքսի ժառանգներից: 11 տարեկանում նա իր ընտանիքի հետ տեղափոխվել են Հյուսիսային Կարոլինայից հարևան Թենեսին: Հյուսիսայի Կարոլինայի համալսարանն ավարտելուց հետո նա նորից վերադարձել է Թենեսի, որտեղ աշխատել էր սրճարանում: 1823 թվականին ընտրվել է Թենեսի նահանգի Ներկայացուցիչների պալատի անդամ, որտեղ մնացել է 2 տարի: 1825 թվականին Թենեսիի նահանգի կողմից

ընտրվել է ԱՄՆ կոնգրեսի անդամ: Շուտով Փոլկը դառնում է Դեմոկրատական կուսակցության առաջնորդը: 1835 թվականին եղել է Ներկայացուցիչների պալատի խոսնակ: 1839-1841 թվականներին եղել է Թենեսի նահանգապետը, որտեղ ձեռք է բերել մեծ քաղաքական փորձ, սակայն երկու անհաջող նահանգապետի ընտրություններից հետո (1843, 1845) վերադարձել է Վաշինգտոն:

ԶԱՔԱՐԻ ԹԵՅԼՈՐ



Զաքարի Թեյլորը ծնվել է 1784 թ.-ի նոյեմբերի 24-ին Վիրջինիա նահանգի Օրինջ շրջանում գտնվող ագարակում, անգլիական ծագում ունեցող նշանավոր ագարակատերերի ընտանիքում:Նրա ծննդավայրը գուցե եղել է Հեիր Ֆորեսթ Ֆարմ կոչվող ագարակը, որը պատկանում էր Թեյլորի մայրական պապին՝ Ուիլյամ Ստրոթերին: Սակայն այս տեղեկությունը հաստատված չէ: Թեյլորն ունեցել է երկու ավագ և երկու կրտսեր եղբայր, ինչպես նաև երեք կրտսեր քույր: Եվս մեկ եղբայրը մահացել է մանկահասակ տարիքում: Նրա մայրը Սառա Դաբնի (Ստրոթեր) Թեյլորն էր: Նրա հայրը՝ Ռիչարդ Թեյլորը, ծառայել էր որպես փոխգնդապետ Ամերիկյան հեղափոխության ընթացքում:

ՄԻԼԼԱՐԴ ՖԻԼՄՈՐ

Միլլարդ Ֆիլմորը ոչ հարուստ ֆերմերի որդի էր՝ Նյու–Յորք նահանգից: Դերձակի մոտ վարպետության դասեր էր առել, իսկ 15 տարեկանից աշխատել էր մահուդի գործարանում:Միլլարդ Ֆիլմորն իր ազատ ժամանակը նվիրել էր ընթերցանությանը:

Մի քանի հարուստ մարդկանց օգնությամբ Միլլարդը կարողացել է Բուֆֆալոյում իրավագիտություն սովորել, հետագայում դարձել է փաստաբան և նահանգի օրենսդիր ժողովի անդամ, որտեղ օրենք անցկացրեց՝ չեղարկելու համար պարտքի դիմաց անձնական կալանավորումը:1828 թվականին Միլլարդ Ֆիլմորը ծանոթանում է քաղաքական գործիչ Տ. Ուիդոմի հետ: Վերջինս համոզել է ապագա նախագահին միանալ հակամասոնական շարժմանը: Իսկ հաջորդ տարի Միլլարդ Ֆիլմորին ընտրել են Նյու Յորք նահանգի օրենսդիր ժողովում: Այդ ժամանակ էլ նա միացավ Ուիդոմին՝ հակաջեքսոնյան շարժմանը:1833-1835 և 1837-1843 թվականներին մասնակցել է ԱՄՆ–ի կոնգրեսի նիստին:

ՖՐԱՆԿԼԻՆ ՓԻՐՍ

Ֆրանկլին Փիրսը ծնվել է Նյու Հեմփշիրում և ծառայել ԱՄՆ Ներկայացուցիչների պալատում և սենատում, մինչև որ նա 1842 թ. հրաժարական տվեց սենատից: Հաջողության հասավ իր անձնական իրավունքի պրակտիկայում, և 1845 թ.-ին նշանակվեց Նյու Հեմփշիր, ԱՄՆ: Նա մասնակցեց Մեքսիկ-ամերիկյան պատերազմին, որպես բանակում բրիգադային գեներալ: Նա դեմոկրատների կողմից դիտվում էր, որպես հյուսիսային և հարավային շահերը միավորող փոխզիջումային թեկնածու և 1852-ին կայացած Ժողովրդավարական ազգային կոնվենցիայում 49-րդ քվեաթերթիկում առաջադրվեց որպես կուսակցության նախագահի թեկնածու: Նա և իր գործընկեր Վիլյամ Ռ. Քինգը հեշտությամբ հաղթեցին Ուինֆիլդ Սքոթի և Ուիլյամ Ա Գրեհեմի կուսակցությանը 1852 թվականի նախագահական ընտրություններում:

ՋԵՅՄՍ ԲՅՈՒՔԱՆԱՆ ԿՐՏՄԵՐ

Ջեյմս Բյուքանան ամերիկացի ականավոր տնտեսագետ, Նոբելյան մրցանակի դափնեկիր՝ տնտեսական և քաղաքական որոշումների ընդունման տեսության պայմանագրային և սահմանադրական հիմքերի ուսումնասիրությունների համար (1986)։ Համարվում է նոր քաղաքատնտեսական դպրոցի հիմնադիրներից մեկը։

Սովորել է Թենեսիի համալսարանում։ Դոկտորի աստիճանն ստացել է Չիկագոյի համալսարանում։ Դասավանդել է Թենեսիի, Ֆլորիդայի և Վիրջինիայի համալսարաններում։ 1962 թ. Գ. Տալոկի հետ համատեղ հրատարակել է «Համաձայնության հաշվարկ» (անգլ.՝ The Calculus of Consent) աշխատությունը, որտեղ վերլուծել է տնտեսագիտական որոշումների ընդունման գործընթացը տնտեսագիտական և քաղաքական խառը մեթոդներով։

1964 թ. եղել է «Հասարակական ընտրություն» միության նախագահը։ Ֆ. Սեյդմանի (1988) և Ա. Սմիթի մրցանակների (1991) դափնեկիր։ Գիտնականի պատվին է կոչվել Ջորջ Մեյսոնի անվան համալսարանի քաղաքատնտեսության կենտրոնը։

ԱԲՐԱՀԱՄ ԼԻՆՔՈԼՆ

ԱՄՆ 16-րդ նախագահ Աբրահամ Լինքոլնը ծնվել է 1809թ. փետրվարի 12-ին աղքատ գյուղական ընտանիքում: Դեռ վաղ տարիքից նա զբաղվել է ֆիզիկական ծանր աշխատանքով: Հաճախել է դպրոց ընդամենը մեկ տարի, քանի որ ընտանիքը գտնվում էր նյութական ծանր վիճակում: Լինքոլնը, սակայն, հասցնում է սովորել տառերը և սկսում կարդալ գրքեր:Երբ նա դարձնում է չափահաս, սկսում է վարել ինքնուրույն կյանք, զբաղվել ինքնուսուցմամբ և, տալով քննություններ, կարողանում է ծավալել իրավաբանական գործունեություն: Իլինոյիս նահանգի հնդկացիների ապստամբության ժամանակ միանում է ոստիկանությանը, ընտրվում կապիտան, բայց չի մասնակցում մարտական գործողություններին: 1858թ.-ին ընտրվում է ԱՄՆ-ի սենատորի թեկնածու, սակայն պարտվում է ընտրություններում:Լինելով նոր տարածքներում ստրկության ընդլայնման հակառակորդ՝ դառնում է Հանրապետական կուսակցության նախաձեռնողներից մեկը, այդ կուսակցության կողմից առաջադրվում է նախագահի թեկնածու և հաղթում 1860թ:

ԷՆԴՐՅՈՒ ՋՈՆՍՈՆ



Էնդրյու Ջոնսոնը ծնվել է Հյուսիսային Կարոլինայում: Հայրը՝ Ջոնսոն Ջեյքոբը, եղել է աղքատ հողատեր, բայց հարգված էր Ռոլիում և ընտրվեց ոստիկան: Նրա մահից հետո ընտանիքը պահում էր մայրը և աշխատում էր որպես լվացարարուհի: Նա տվեց իր որդուն դերձակի ենթավարպետ Ջեյմս Մելբիին, որտեղ Ջոնսոնը սովորեց գրագիտություն: Հետագայում, որպես նախագահ, Ջոնսոնը ինքն էր կարում իր վերնահագուստը, նրա մասնագիտությունը հետո ծաղրանկարիչ Թոմաստ Նաստը օգտագործել է իր ծաղրանկարներում: Տեղափոխվելով Գրենվիլլ, Թենեսի, որտեղ նա բացում է արհեստանոց և ամուսնանում կոշկակար Էլզ Մակարդլի դստեր հետ (հետաքրքիր է, որ նրա ամուսնությունը գրանցել է դատավոր Մորդեկայ Լինքոլնը՝ ապագա նախագահի հորեղբայրը): Կնոջ նախաձեռնությամբ Ջոնսոնը սովորել է և ակտիվ զբաղվել է ինքնակրթությամբ: Ջոնսոնը հաջողությամբ զարգացրել է դերձակի բիզնեսը և կարող էր զբաղվել իր ներդրումներով, հաճախ էր կարդում և այցելում տեղական քոլեջներ, որտեղ մասնակցում էր բանավեճին:

ՈՒԼԻՍԵՍ Ս. ԳՐԱՆԹ

Ուլիսես Սիմփսոնն ամերիկացի քաղաքական և ռազմական գործիչ, ԱՄՆ-ի քաղաքացիական պատերազմի տարիներին հյուսիսային գնդի զորահրամանատար, բանակի գեներալ (1866 թվականի հուլիսի 25-1869 թվականի մարտի 4)։ 1869 թվականի մարտի 4-ից մինչև 1877 թվականի մարտի 4ը ԱՄՆ 18-րդ նախագահ։ 1913-ից Գրանտի դիմանկարը պատկերված է 50 դոլար արժողությամբ թղթադրամի վրա։ Ամերիկայի փիլիսոփայական հասարակության անդամ (1868), արժանացել է Կոնգրեսի Ոսկե մեդալի (1863)։

Հայրեմ Ուլիս Գրանտը ծնվել է 1822 թվականին։ Նրա ծնողները՝ ծագումով շոտլանդացիներ են, ընտանիքը եղել է ապահովված՝ հայրը ունեցել է դուբիլային արհեստանոց։ Ուիլսի մոր ազգանունը՝ Սիմփսոն, երբեմն սխալմամբ մեկնաբանվում է որպես նրա երկրորդ անուն, չնայած, Գրանտի վկայությամբ, դա չի համապատասխանում ճշմարտությանը։

1843 թվականին Գրանտն ավարտել է Վեստ-Փոյնթի ռազմական ակադեմիան, առաջադիմության 21-րդն էր և ստացել երկրորդ լեյտենանտի ժամանակավոր կոչում։ Գրանտը ծառայել է որպես կվարտիրմեյստեր Միսուրիի սահմանի 4-րդ հետևակային գնդում, այստեղ նա ստիպված էր կռվել հնդիկների հետ։ 1845 թվականին, երբ սկսվեց Մեքսիկայի հետ պատերազմը, Հրանտի գունդը

ուղարկվեց Տեխասի սահման և ակտիվ մասնակցություն ունեցավ հետագա ռազմական գործողություններին: 1854 թվականին նա հեռացավ զինվորական ծառայությունից և հաստատվեց Սենթ Լուիսում՝ դառնալով ֆերմեր, հետագայում տեղափոխվելով Գալենա՝ Իլինոյս նահանգ, իր հոր մոտ, որը շարունակում էր զբաղվել մաշկի արտադրությամբ:

Ակադեմիայում Գրանտը ստացել է «Քեռի Սեմ Գրանտ» մականունը, կամ պարզապես Սեմ, անվան ինիցիալով, որոնց տակ Գրանտը գրանցվել է ակադեմիա:

ՌՈՒԹԵՐՖՈՐԴ Բ. ՀԵՅՍ



Հեյսը ծնվել է Օհայո նահանգի Դելավերե քաղաքում՝ Ռութերֆորդ Հեյսի և Սոֆիա Բյորչարդի ընտանիքում: Հայրը մի ժամանակ Վերմոնտում խանութի սեփականատեր էր, այնուհետև 1817 թվականին տեղափոխվեց Օհայո, բայց որդու ծնվելուց 10 շաբաթ առաջ մահացավ: Մայրն ինքնուրույն է մեծացրել Հեյսին և քրոջը՝ Ֆեննիին: Սոֆիայի կրտսեր եղբայրը՝ Սարդիս Բյորչարդը, որոշ ժամանակ ապրել է նրանց հետ և մասամբ փոխարինել Ռութերֆորդի հորը:Միության փլուզումից հետո Հեյսը որոշ ժամանակ տատանվում էր նախընտրության կողմն ընտրելու հարցում, սակայն Սամթեր ամրոցի գնդակոծությունից հետո որոշեց պաշտպանել Հյուսիսային կողմին: Նա բանակին միացավ որպես

շարքային, բայց արդեն 1861 թվականի ամռանը դարձավ մայոր 23-րդ օհայոյան զորագնդում:

ՋԵՅՄՍ ԱԲՐԱՄ ԳԱՐՖԻԼԴ



Ջեյմս Աբրամ Գարֆիլդ եղել է Միացյալ Նահանգների 20-րդ նախագահը, 1881 թվականի մարտի 4-ից մինչև իր մահը: Կառավարել է ընդամենը վեց ու կես ամիս, սեպտեմբերի 19-ին նրան սպանում են: Նա Կոնգրեսի առաջին գործող անդամն էր, ով ընտրվել էր որպես նախագահ:Գարֆիլդը քաղաքականություն մտավ որպես հանրապետական 1857 թվականին: Նա եղել է Օհայո նահանգի Սենատի անդամ ՝ 1859 թվականից մինչև 1861 թվականը: Գարֆիլդը հակադրվեց Կոնֆեդերացիայի անջատմանը, ծառայեց որպես Միավորված բանակի գլխավոր գեներալ ամերիկյան քաղաքացիական պատերազմի տարիներին և կռվեց Միջին Կրեկի, Շիլոհի և Չիկամաուգայի մարտերում: Նա առաջին անգամ ընտրվել է Կոնգրես 1862 թվականին ՝ Օհայոյի 19-րդ շրջանին: Քաղաքացիական պատերազմից հետո Գարֆիլդը արդեն ձեռք էր բերել համբավ որպես հմուտ հռետոր:1880 թվականի Հանրապետական ազգային կոնվենցիայում պատվիրակները ընտրեցին Գարֆիլդին, ով չէր պայքարում Սպիտակ տան համար:

ՉԵՍԹԵՐ Ա. ԱՐԹՈՒՐ

Արթուրը ծնվել է Վերմոնտում գտնվող Ֆերֆիլդ քաղաքում, մեծացել Նյու Յորքի արվարձանում և Նյու Յորքում սովորել է իրավաբանություն: Նա Ամերիկայի քաղաքացիական պատերազմի ժամանակ եղել է Նյու Յորքի Միլիցիայի մատակարարման գեներալ: Պատերազմից հետո նա ավելի շատ ժամանակ նվիրեց հանրապետականների քաղաքականությանը և արագ աճեց Նյու Յորքի սենատոր Ռոսկո Քոնկլինգի քաղաքական կազմակերպությունում: Նախագահ Ուլիս Գրանտը 1871 թվականին նրան նշանակեց Նյու Յորքի նավահանգստի կոլեկցիոների պաշտոնում, և նա Քոնկլինգի Հանրապետական կուսակցության Ստալվարտ խմբակցության կարևոր աջակիցն էր: 1878 թվականին Նախագահ Ռադերֆորդ Բ. Հայեսը աշխատանքից հեռացրեց Արթուրին Նյու Յորքի դաշնային հովանավորչական համակարգը հեղափոխելու ծրագիր ունենալու պատրվակով: Նրա նշանակվելուց չորս ամիս անց Գարֆիլդը հրազենով սպանվեց մարդասպանի կողմից, 11 շաբաթ անց նա մահացավ, և Արթուրը ստանձնեց նախագահի պաշտոնը:

ՍԹԻՎԵՆ ԳՐՈՎԵՐ ԿԼԻՎԼԵՆԴ

Սթիվեն Գրովեր Քլիվլենդն ԱՄՆ-ի պետական և քաղաքական գործիչ: 2 անգամ դարձել է ԱՄՆ-ի նախագահ:

Միակ նախագահն է, ով այդ պաշտոնում ընտրվել է ընդմիջումով: Նաև ԱՄՆ պատմության մեջ առաջին և միակ նախագահն է, ում պսակադրությունը տեղի է ունեցել «Սպիտակ տանը»: Նա ամուսնացել է Ֆրանսիս Ֆոլսոմի հետ, ով իր հերթին ԱՄՆ-ի ամենաերիտասարդ առաջին տիկինն է (21 տարեկան):

ԲԵՆՋԱՄԻՆ ՀԱՐՐԻՍՈՆ

Հարրիսոնի նախնիները հոր կողմից առաջին ընտանիքն է Վիրջինյանիների տոհմում: Բենջամին Հարրիսոնի տոհմը եկել է Ջեյմստաուն 1630 թվականին: Բենջամին Հարրիսոն 6-րդը ծնվել է 1833 թվականի օգոստոսի 20-ին Նորթ-Բենդում: Նա Ջոն Սքոտ Հարրիսոնի և Էլիզաբեթ Ռեյմսի 8 երեխաներից 2-րդն էր:

Բենջամինի պապիկը ԱՄՆ-ի 9-րդ նախագահն էր: Հարրիսոնը 7 տարեկան էր, երբ նրա պապը դարձավ ԱՄՆ-ի նախագահը: Իր երդման արարողությանը Բենջամինը չկարողացավ ներկա լինել:Երբ սկսվեցին նախագահական ընտրությունները հիմնական թեկնածուներն էին Բենջամին Հարրիսոնը, Ջոն Շերմանը, Չոնսի Դեպյուն, Ռասսել Ալջերը և Ուոլտեր Գրիշամը: Նրանցից յուրաքանչյուրը ակտիվորեն մասնակցում էր նախագահական ընտրություններից առաջ կատարվող հավաքներին և ամեն կերպ ցանկանում էր սիրաշահել հասարակությանը: Պայքարը հիմնականում ընթանում էր Ջոն Շերմանի և Բենջամին Հարրիսոնի միջև: Տարաձայնություններն ընդհատվեցին, երբ արդեն պարզ դարձավ, որ նախագահ է ընտրվել Բենջամին Հարրիսոնը, իսկ փոխնախագահ ընտրվեց Լևի Մորտոնը:

ՈՒԻԼԻԱՄ ՄԱՔ-ՔԻՆԼԻ

Մաք-Քինլին եղել է 20-րդ դարի առաջին ԱՄՆ նախագահը և Քաղաքացիական պատերազմին մասնակցած վերջին նախագահը:Ստացել է մայորի կոչում Հյուսիսի և Հարավի պատերազմի ժամանակ, հետո զբաղվել է իրավաբանությամբ Կանտոն քաղաքում (Օհայո նահանգ): 1877 թվականին ընտրվել է կոնգրեսում, որտեղ եղել է Հանրապետական կուսակցության անդամ և ծայրահեղ պրոտեկցիոնիզմ դրսևորել: 1890 թվականին առաջարկել է այսպես կոչված «բիլ Մաք-Քենլին»,

որը կազմված էր երկու առանձին, բայց միևնույն նպատակը հետապնդող օրենքի նախագծերի:1896 թվականի վերջում ընտրվել է նախագահ. 1900 թվականի վերջում վերընտրվեց 4 տարով: Մաք-Քինլիի նախագահության տարիները իմպերալիզմի և պրոտեկցոնիզմի ծաղկման շրջանն էր: 1898 թվականին Միացյալ Նահանգները պատերազմում էր Իսպանիայի հետ, ինչը վերջացավ Կուբայի օկուպացիայով, այնուհետև՝ Ֆիլիպինն օկուպացվեց Պուերտո Ռիկոյից: Բռնակցվեց նաև Հավային : 1901 թվականին Թոմաս Էդիսոնը նկարահանեց «Կադրեր նախագահ Մաք-Քինլիի երդմնակալությունից» կարճամետրաժ ֆիլմը:

ԹԵՈԴՈՐ ՌՈՒԶՎԵԼՏ

Թեոդոր Ռուզվելտը ծնվել է Նյու Յորքում 1858 թվականի հոկտեմբերի 27-ին, նիդերլանդական ծագում ունեցող առևտրականի և բարեգործի ընտանիքում: Թեոդորն ընտանիքի երկրորդ զավակն էր, նա ուներ մեկ ավագ և մեկ կրտսեր քույր, ինչպես նաև կրտսեր եղբայր: Մանկուց ապագա նախագահը չէր տարբերվում ամուր առողջությամբ և տառապում էր ասթմա հիվանդությամբ: 1860 թվականների վերջին և 1870 թվականների սկզբին Ռուզվելտների ընտանիքը ճանապարհորդում էր Եվրոպայով, Աֆրիկայով և Մերձավոր Արևելքով: Թեոդորը տարրական կրթությունը ստացել է հիմնականում տնային պայմաններում՝ հիվանդության պատճառով նա գրեթե դպրոց չի գնացել:1876 թվականին Թեոդորն ընդունվել է

Հարվարդի համալսարան, իսկ 1880 թվականին ավարտել այն: Հենց այդ ժամանակ էլ հրապարակեց իր առաջին էսսեը և սկսեց զբաղվել քաղաքականությամբ, մասնավորապես՝ անդամագրվեց Հանրապետական կուսակցությանը: 1882-1884 թվականներին Ռուզվելտը Նյու Յորք նահանգի լեգիսլատուրայի անդամ էր: 1884 թվականի փետրվարի 14-ին նույն օրում կորցրել է մորը և կնոջը:

ՈՒԻԼՅԱՄ ՀՈՎԱՐԴ ԹԱՖՏ

Ուիլյամը մեծացել է Օհայոյի Սինցինատի քաղաքում: Նրա հայրը փաստաբան էր, որը ծառայում էր որպես ռազմական քարտուղար և գլխավոր դատախազ Նախագահ Ուլիս Ս. Գրանտ, Ուիլյամը սիրում էր սպորտը և դպրոցը: Նա հատկապես լավ էր տիրում բեյսբոլում և մաթեմատիկայում: 1878 թվականին նա ավարտել է Յեյլի համալսարանը, այնուհետև անցել է իրավաբանական դպրոց՝ սովորելու դառնալ իրավաբան: 1880-ին նա հանձնեց փաստաբանական քննությունը և բացեց իր իրավաբանական պրակտիկան: Թաֆտը մահացավ սրտի հիվանդությունից 1930 թ.-ին: Նա թաղվեց Առլինգտոնի ազգային գերեզմանատանը: Ավելի ուշ նրա կողքին թաղվեց նրա կինը՝ Հելենը:

ԹՈՄԱՍ ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆ

Թոմաս Վուդրո Վիլսոնը մինչև 12 տարեկան հասակը կարդալ չի իմացել՝ ուսումնառության մեջ որոշակի դժվարություններ դրսևորելով: Հետագայում նա սովորել է սղագրություն և զգալի ջանքեր է ներդրել, որ վերացնի ուսման մեջ ունեցած դժվարությունները: Նա տանը սովորել է հոր մոտ, այնուհետև Ավգուստի փոքր դպրոցում: 1873 թվականին ընդունվել է Հյուսիսային Կարոլինայի Դևիդսոնի քոլեջ, որտեղ պատրաստում էին պաստորական եկեղեցու ծառայողներ: Հիվանդության պատճառով 1874 թվականի ամռանը լքել է քոլեջը և հաստատվել Ուիլմինգթոնում (Հյուսիսային Կարոլինա նահանգ), որտեղ այդ ժամանակ ապրել է նրա ընտանիքը:1875 թվականին ընդունվել է Փրինսթոնի համալսարան, որն ավարտել է 1879 թվականին: Ուսումնառության երկրորդ տարվանից սկսած՝ ակտիվորեն հետաքրքրվել է քաղաքական փիլիսոփայությամբ և պատմությամբ, եղել է ոչ պաշտոնական բանավեճային ակումբի անդամ, ինքնուրույն կազմակերպել Լիբերալ բանավիճային հասարակություն:

ՈՒՈՐԵՆ ԳԱՄԱԼԻԵԼ ՀԱՐԴԻՆԳ

Ուորեն Գամալիել Հարդինգ ծնվել է նոյեմբերի 2, 1865, Ծաղկող պուրակ, Morrow County, Ohայո, ԱՄՆ - օգոստոսի 2, Գրանդ Հոթել, ամերիկյան պետական գործիչ, ԱՄՆ 29-րդ նախագահը (1921-1923) հանրապետական կուսակցությունից: Ի տարբերություն իր նախորդի՝ Վուդրո Վիլսոնի, վարել է եվրոպական գործերից ԱՄՆ-ի մեկուսացման (իզոլյացիոնիզմի) քաղաքականություն, որն արտահայտվել է նաև հայկական հարցում՝ պայմանավորելով Հարդինգի կառավարության դանդաղկոտությունն ու անվճռականությունը, ի կատարումն 1920 թվականի Սևրի հաշտության պայմանագրի, Հայաստան խաղապահական զորք ուղարկելու և հայկական բանակը հանդերձավորելու հարցում, ինչպես նաև պասիվ դիրքորոշումը 1922-1923 թթ. Լոզանի կոնֆերանսում, որտեղ քննարկվում էր «հայկական օջախ» ստեղծելու կենսական խնդիրը: Որպես սենատական ենթահանձնաժողովի նախագահ և ապա երկրի պրեզիդենտ Հարդինգը բազմիցս իր հրապարակային ելույթներում համակրանքով է արտահայտվել «փոքր դաշնակցի» (Հայաստանի) և նրա «բազմատանջ» ժողովրդի մասին:

ՔԱԼՎԻՆ ՔՈՒԼԻՋ

Քալվին Քուլիջը ծնվել է 1872 թվականի հուլիսի 4-ին Վերմոնտ նահանգի Ուինդսորի շրջանի Պլիմուտ փոքրիկ քաղաքում[6]: Մայրը՝ Վիկտորյա Քուլիջը (Victoria Josephine Moor), մահացել է 39 տարեկան հասակում (1885 թվականի մարտ), երբ Քալվինն ընդամենը 13 տարեկան էր:Հայրը՝ Ջոն Քալվինը, բազում զբաղմունքներ ուներ: Նա ամբողջ նահանգում հայտնի էր որպես հաջողակ ֆերմեր, խանութի սեփականատեր՝ զբաղեցնելով քաղաքական զանազան պաշտոններ: Նա ընտրվել է ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի և Վերմոնտ նահանգի սենատի անդամ, զբաղեցրել է հասարակական տարբեր պաշտոններ՝ ներառյալ հաշտարար դատավորի և հարկահավաքի պաշտոնները:Մասսաչուսեթսի նահանգապետ Քուլիջը 1920 թվականին նախագահ Ուորեն Հարդինգի հետ ընտրվել է ԱՄՆ-ի փոխնախագահի պաշտոնում:

ՀԵՐԲԵՐՏ ՔԼԱՐԿ ՀՈՒՎԵՐ

Հերբերտ Քլարկ Հուվեր ամերիկյան պետական և քաղաքական գործիչ, խոշոր արդյունաբերող, ԱՄՆ 31-րդ նախագահ (1929-1933): Ծնվել է Այովա նահանգում, Քվակերների ընտանիքում: Ավարտել է Սթենֆորդի համալսարանը: 1919-1923 թվականներին գլխավորել է «Ամերիկյան օգնության վարչությունը», 1921-1928 թվականներին՝

առևտրի նախարար, 1929-1933 թվականներին՝ ԱՄՆ նախագահ (հանրապետական կուսակցությունից)։ 1938 թվականին հանդիպել է Հիտլերի հետ և ողջունել «մյունխենյան քաղաքականությունը»։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխատել է որպես նախագահի հատուկ հանձնակատար։

ՖՐԱՆԿԼԻՆ Դ. ՌՈՒԶՎԵԼՏ

Ռուզվելտը ծնվել է Հայդ Փարկում ԱՄՆ-ի 26-րդ նախագահ Թեոդոր Ռուզվելտի ընտանիքում։ Սովորել է Գրոթոնի դպրոցում, այնուհետև Հարվարդի քոլեջում, իսկ ավարտելով Կոլումբիայի իրավաբանական դպրոցը՝ Նյու Յորքում իրավաբանական գործունեություն է ծավալել։ 1905 թվականին ամուսնացել է իր բարեկամուհու՝ Էլեոնոր Ռուզվելտի հետ և ունեցել վեց երեխա։ 1910 թվականին հաղթանակ է տարել Նյու Յորքի սենատորական ընտրությունների ժամանակ, այնուհետև Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ Վուդրո Վիլսոնի նախագահության ժամանակ, ստանձնել է

ռազմածովային ուժերի օգնականի պաշտոնը: 1920 թվականին Ռուզվելտը եղել է Ջեյմս Քոքսի օգնականը: 1921 թվականին Ռուզվելտի մոտ ախտորոշվել է լուծանք, որն այդ ժամանակ հայտնի էր պոլիոմիելիտ անվամբ: Հիվանդության հետևանքով Ռուզվելտի ոտքերը վերջնականապես կաթվածահար են եղել: Նա ամեն կերպ փորձել է վերականգնել իր առողջությունը և այդ նպատակով Ջորջիա նահանգում հիմնել է առողջապահական կենտրոն, որտեղ կարող էին բուժում ստանալ նմանատիպ հիվանդությամբ տառապող մարդիկ:

ՀԱՐԻ Ս. ԹՐՈՒՄԱՆ

Թրումանը ծնվել է 1884 թվականի մայիսի 8-ին Միսսուրի նահանգի Լամար քաղաքում: Ջոն Անդերսեն Թրումանի և Մարթա Էլեն կրտսեր Թրումանի ավագ երեխան է: Նրան անվանել են քեռու անունով՝ Հարիսուն «Հարի» կրտսեր: Նրա միջին «Ս» տառը ի պատիվ նրա պապիկների է՝ Անդերսոն Շիպ Թրումանի և Սոլոմոն Կրտսերի: Նրա եղբայ Ջոն Վիվիանը ծնվել է Հարիից հետո, որին հաջորդել է քույրը՝ Մարի Ջեյնը: Թրումանի նախնիները անգլացիներ են եղել, ունենալով շոտլանդա-իռլանդական, գերմանական և ֆրանսիական արմատներ:Ջոն Թրումանը եղել է ֆերմեր և արժեթղթերի դիլեր: Նրա ընտանիքն ապրել է Լամարում մինչև Հարին դարձել է տասը ամսական և

նրանք տեղափոխվել են նոր Ֆերմա Հարիսոնվիլի մոտ: Դրանից հետո նրա ընտանիքը տեղափոխվել է Բելթոն և 1887 թվականին իր պապու ֆերմա՝ Գրանդվյուում: Երբ Թրումանը վեց տարեկան էր, նրա ծնողները տեղափոխվել են Ինդեփենդենս, որտեղ Թրումանը հաճախել է Պրեսբիտերականների կիրակնօրյա եկեղեցական դպրոց: Նա չի հաճախել միջնակարգ դպրոց մինչև ինը տարեկանը:

ԴՈՒԱՅԹ ԷՅԶԵՆՀԱՈՒԵՐ

Դուայթ Էյզենհաուերը ծնվել է հոկտեմբերի 14, 1890, Գրեյսոն շրջան, Տեխաս, ԱՄՆ - մարտի 28, 1969, Ուոլթեր Ռիդի անվան ռազմական բժշկական կենտրոն, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, ԱՄՆ), ամերիկացի պետական և ռազմական գործիչ, գեներալ (1944) Ամերիկայի Միացյալ Նահանգների 34-րդ նախագահը (հունվարի 20, 1953 - հունվարի 20, 1961, ինչպես նաև 19-րդ դարում ծնված ԱՄՆ վերջին նախագահը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նա ամերիկյան բանակի գեներալ էր և Եվրոպայի Հակահիտլերյան խմբավորման գլխավոր հրամանատարը: Պատասխանատու էր 1942-1943 թվականներին Մարոկո-ալժիրական գործողության շրջանակներում Հյուսիսային Աֆրիկա ներխուժելը, ինչպես նաև Արևմտյան ճակատից 1944-1945 թվականներին Ֆրանսիա և Գերմանիա ներխուժելը ծրագրելու և կազմակերպելու համար: 1951 թվականին Դուայթը դարձավ ՆԱՏՕ-ի առաջին գերագույն հրամանատարը:

ՋՈՆ ՔԵՆԵԴԻ

Ջոն Քենեդին ծնվել է 1917 թվականի մայիսի 29-ին Մասաչուսեթս նահանգում: Հայրը Ֆրանկլին Ռուզվելտի առաջին օգնականներից էր, կառավարությունում՝ անվտանգության ծառայության պետը, վալյուտային և ծովային հանձնաժողովների ղեկավարը, Մեծ Բրիտանիայում ԱՄՆ դեսպանը: Գերազանց ավարտելով Հարվարդի համալսարանը՝ Ջոնն աշխատանքի անցավ հոր մոտ իբրև գործավար և ստացավ գործնական գիտելիքներ:Հաղթելով 1947 թվականի Կոնգրեսի ընտրություններում՝ նա դարձավ ներկայացուցիչների պալատի անդամ, իսկ 1952 թվականին արդեն սենատոր էր: 1957 թվականին Ջոն Ֆիցջերալդ Քենեդին իր թեկնածությունն առաջադրեց նախագահական ընտրություններում: 1960 թվականին Դեմոկրատական կուսակցության կողմից նա առաջադրվեց նախագահի թեկնածու և ձայների փոքր առավելությամբ հաղթեց ընտրություններում: Իր անձնական հատկանիշների շնորհիվ Քենեդին երկրում մեծ ժողովրդականություն էր վայելում:

ԼԻՆԴՈՆ Բ. ՋՈՆՍՈՆ

Լինդոն Բ. Ջոնսոնը ծնվել է ֆերմերի ընտանիքում: 1930-ից զբաղվել է ուսուցչությամբ: 1939—1948-ին եղել է ներկայացուցիչների պալատի անդամ, 1949—61-ին՝ սենատոր (Տեխասի նահանգից):1961-ից՝ ԱՄՆ-ի փոխպրեզիդենտ, պրեզիդենտ Ջ. Քենեդիի սպանությունից (1963-ի նոյեմբեր) հետո՝ պրեզիդենտ (վերընտրվել է 1964-ին): Սերտորեն կապված էր Տեխասի ֆինանս, և նավթային մագնատների հետ: Ջոնսոնի պրեզիդենտության շրջանում ամեր. իմպերիալիզմը սանձազերծել է պատերազմ Վիետնամում, ինտերվենցիա Դոմինիկյան Հանրապետությունում, պաշտպանել Իսրայելի ագրեսիան Մերձավոր Արևելքում: Երկրի ներսում մեծապես սրվել են սոցիալական և ռասայական կոնֆլիկտները: Նման պայմաններում Ջոնսոնը 1968-ին հարկադրված հրաժարվել է նոր ընտրությունների համար իր թեկնածության առաջադրումից:

ՌԻՉԱՐԴ ՆԻՔՍՈՆ

Ռիչարդ Նիքսոն ծնվել է Կալիֆորնիայում: Դառնալով իրավաբան՝ 1937 թվականին վերադառնում է հայրենի նահանգ, որպեսզի զբաղվի իրավաբանական գործունեությամբ: 1942 թվականին, դաշնային կառավարությունում աշխատելու առաջարկ ստանալով, կնոջ հետ տեղափոխվում է Վաշինգտոն: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ծառայել է ԱՄՆ-ի ռազմա-ծովային ուժերում: 1946 թվականին ընտրվել է Ներկայացուցիչների պալատի անդամ Կալիֆորնիայից, իսկ 1950 թվականին՝ Մենատի: 1952 թվականի նախագահական ընտրություններից հետո, որում հաղթել էր Դուայթ Էյզենհաուերը, Նիքսոնն զբաղեցնում է փոխնախագահի պաշտոնը: 8 տարի այդ պաշտոնն զբաղեցնելուց հետո՝ 1960 թվականին, մասնակցում է նախագահական ընտրություններին, սակայն նվազագույն տարբերությամբ զիջում է Ջոն Քենեդուն: 1962 թվականին նույնպես անհաջող մասնակցում է Կալիֆորնիայի նահանգապետի ընտրություններին: 1968 թվականին Նիքսոնը կրկին մասնակցում է նախագահական ընտրություններին և այս անգամ հաղթում:

ՋԵՐԱԼԴ ՖՈՐԴ

Ջերալդ Ֆորդն Ամերիկայի Միացյալ Նահանգների 38-րդ նախագահն է: Այս պաշտոնը զբաղեցրել է օգոստոս 9, 1974 թվականից մինչև հունվար 20, 1977: Բացի այս նա եղել է 40-րդ ԱՄՆ փոխնախագահը Ռիչարդ Նիքսոնի նախագահության ժամանակ 1973 թվականից մինչև 1974 թվականը: Նա առաջին մարդն էր, ով համաձայն ԱՄՆ սահմանադրության 25-րդ կետի նշանակվեց փոխնախագահ, նախկինում այս պաշտոնից հրաժարված Սպիրո Էնգրյուի փոխարեն: Դառնալով նախագահ Ռիչարդ Նիքսոնի հրաժարականից հետո՝ նա դարձավ առաջին նախագահը, ով չի ընտրվել ոչ նախագահ, ոչ էլ փոխնախագահ: Մինչև փոխնախագահ նշանակվելը Ֆորդը եղել է ԱՄՆ ներկայացուցիչների պալատի անդամ՝ ընտրված լինելով Միչիգանում:

ՋԻՄԻ ԿԱՐՏԵՐ

Ջիմի Կարտերը ծնվել է 1924 թ. Հոկտեմբերի 1-ին, Վրաստանում: Նա ունի երկու երիտասարդ քույրեր, մոտ իր տարիքը եւ 13 տարեկան ծնված եղբայրը: Ջիմիի մայրը՝ բժիշկ Բեսսի Լիլիան Գորդի Քարթերը, խրախուսեց նրան հոգ տանել աղքատ եւ կարիքավոր: Նրա հայրը՝ Ջեյմս Էրլ Սրը, գետնանուշ էր եւ բամբակյա հողագործ, որը նույնպես սեփականություն էր

հանդիսանում ֆերմերային մատակարարման բիզնեսով: Ջիմիի հայրը, որը հայտնի է որպես Էրլ, ընտանիքը տեղափոխել է գյուղատնտեսություն փոքրիկ համայնքում Archery երբ Jimmy չորս էր: Ջիմին օգնեց ֆերմայում եւ ֆերմերային ապրանքների մատակարարմամբ: Նա փոքր ու խելացի էր, եւ հայրը նրան տվեց աշխատանքի: Հինգ տարեկանում Ջիմին վաճառում էր խաշած գետնանուշներ, դեպի հարթավայրեր: 8 տարեկանում նա ներդրումներ է կատարում բամբակի վրա, եւ նա կարողացել է վարձակալել հինգ կիսալուսցույց տներ:

ՌՈՆԱԼԴ ՌԵՅԳԱՆ

Ռոնալդ Ռեյգանը (1911թ. փետրվարի 6 – 2004թ. հունիսի 5) Ամերիկայի Միացյալ Նահանգների 40-րդ նախագահն է եղել: Այս պաշտոնն զբաղեցրել է 1981 թվականից մինչև 1989թ.Բազմաթիվ ամերիկացիներ, լսելով Ռոնալդ Ռեյգանի անունը, միանգամից ասում են՝ «Ռեյգան-նախագահ», բայց թերևս շատ քչերն են հիշում Ռեյգան-

դերասանի մասին: Դեռևս 1960-ականներին հաճախ կլսեինք «նա անգամ դերը չի կարողանում նորմալ խաղալ» արտահայտությունը: Եվ դա Ռեյգանի մասին էր:Տիպիկ ծույլիկը, ով իր կյանքի ընթացքում ոչինչ մինչև վերջ չսովորեց, սակայն նա, ով սառը պատերազմում հաղթանակ տարավ: Ռեյգան, ով համարյա կույր չկրեց ակնոց, Ռեյգան, ով ԱՄՆ-ն դարձրեց աշխարհի ամենազարգացած երկրներից մեկը նոր տեխնոլոգիաների ոլորտում: Ահա նա՝ Ռոնալդ Ռեյգանը՝ մարդ լեգենդն ինչպես Ամերիկայի, այնպես էլ ողջ աշխարհի համար:Բրիտանացի «երկաթյա լեդին»՝ Մարգարետ Թեթչերը, Ռեյգանին անվանել է «ԱՄՆ հանճարեղ հերոս»: Այդ ամենը Ռոնալդ Ուիլսոն Ռեյգանի՝ ԱՄՆ 40-րդ նախագահի մասին է առանց ում թե՛ ԱՄՆ-ն, թե՛ ամբողջ աշխարհը չէր լինի այնպիսին, ինչպիսին այսօր է:

ՋՈՐՋ Հ. ՈՒ. ԲՈՒՇ

Ջորջ Հերբերտ Ուոքեր Բուշն Ամերիկայի Միացյալ Նահանգների 41-րդ նախագահ. պաշտոնը զբաղեցրել է 1989 թվականի հունվար 20-ից մինչև 1993 թվականի հունվար 20-ը, նաև ԱՄՆ փոխնախագահ 1981-1989 թվականներին: Հանրապետական կուսակցության անդամ, նախկին կոնգրեսմեն և դեսպան: Նա ապրող ԱՄՆ նախագահներից և փոխնախագահներից ամենատարեցն է եղել իր կենդանության օրոք: Նա նաև վերջին

ԱՄՆ նախագահն էր, ով Երկրորդ համաշխարհային պատերազմի վետերան է եղել: Բուշին հաճախ անվանել են Ջորջ Հ. Ու. Բուշ, Բուշ 41, Բուշ ավագ, որպեսզի տարբերեն նրա որդուց՝ ԱՄՆ նախկին նախագահ Ջորջ Ու. Բուշից: Մինչև իր որդու նախագահ դառնալը, նրան անվանում էին պարզապես Ջորջ Բուշ կամ Նախագահ Բուշ:

Բուշը ծնվել է Մասաչուսեթսի Միլթոն քաղաքում, սենատոր Պրեսկոտ Բուշի և Դորոթի Ուոլկեր Բուշի ընտանիքում: 1941 թվականի Պյորլ Հարբորի վրա տեղի ունեցած հարձակումից հետո Բուշը թողեց քոլեջը և անդամագրվեց ԱՄՆ ռազմածովային ուժեր իր 18-րդ տարեդարձի օրը՝ դառնալով ամենաերիտասարդ ռազմածովային օդաչուն այդ ժամանակ: Նա ծառայեց մինչև պատերազմի ավարտը այնուհետև ընդունվեց Յեյլի համալսարան: Ավարտելով 1948 թվականին՝ նա իր ընտանիքով տեղափոխվեց Արևմտյան Տեխաս և մտավ նավթային բիզնեսի մեջ՝ դառնալով միլիոնատեր 40 տարեկանում:

Նա մտավ քաղաքականություն սեփական նավթային ընկերությունը հիմնադրելուց քիչ հետո՝ դառնալով կոնգրեսմեն: Նրան չհաջողվեց 1980 թվականի նախագահական ընտրություններում դառնալ Հանրապետականների թեկնածու, սակայն Ռոնալդ Ռեյգանի ժամանակ դարձավ փոխնախագահ: Իր պաշտոնավարման ժամանակ Բուշը գլխավորեց նարկոտիկների դեմ պատերազմի ադմինիստրացիան:

1988 թվականի նախագահական ընտրություններում Բուշը ընտրվեց նախագահ՝ հաղթելով դեմոկրատ մրցակից Մայքլ Դուկակիսին: Բուշի վարած արտաքին քաղաքականության շնորհիվ ԱՄՆ-ի զինված ուժերը մտան Պանամա և ներքաշվեցին Իրաք-քուվեյթյան պատերազմի մեջ, 1989 թվականին ընկավ Բեռլինի պատը և երկու տարի անց փլուզվեց Խորհրդային Միությունը: Ներքին քաղաքականության մեջ Բուշը հավատարիմ մնաց իր

նախընտրական խոստմանը և կոնգեսի հետ երկար վիճաբանությունից հետո ավելացրեց հարկերը, որոնք կոնգրեսը հաստատեց: Թույլ տնտեսական քաղաքականության շնորհիվ, որի արդյունքում բյուջեն ունեցավ շարունակական սղաճ, 1992 թվականի նախագահական ընտրություններում Բուշը պարտվեց դեմոկրատ Բիլ Քլինտոնին:

Բուշը լքեց իր պաշտոնը 1993 թվականին: Բուշի ավագ որդին՝ Ջորջ Ու. Բուշը ավելի ուշ դարձավ Տեխասի նահանգապետը և ԱՄՆ 43-րդ նախագահը (2001–2009), դառնալով այն երկու նախագահներից մեկը (մյուսը եղել է Ջոն Քուինսի Ադամսը), ովքեր եղել են նախկին նախագահի որդիներ: Նրա երկրորդ որդին՝ Ջեբ Բուշը եղել է Ֆլորիդայի նահանգապետը:

ԲԻԼ ՔԼԻՆԹՈՆ

Բիլ Քլինթոնն Ամերիկայի Միացյալ Նահանգների 42-րդ նախագահն է: Այս պաշտոնը զբաղեցրել է հունվար 20, 1993 թվականից մինչև հունվար 20, 2001: ԱՄՆ նախագահի պաշտոնում նա ընտրվել է Դեմոկրատական կուսակցությունից:Մինչև նրա ծնունդը, դժբախտ պատահարի արդյունքում մահանում է նրա հայրը: Չորս տարի անց նրա մայրը ամուսնանում է ավտոմեքենաների վաճառքով զբաղվող Ռոջեր Քլինթոնի հետ, որի ազգանունն է պաշտոնապես կրում իր որդին:Վիլյամ Ջեֆերսոն Բլեյթ III (William Jefferson Blythe III) ծնվել

է 1946 թ. օգոստոսի 19-ին Արկանզաս նահանգի Հոուպ քաղաքում: Երեք ամիս առաջ ավտովթարից մահացել է հայրը: Երբ Բիլը չորս տարեկան էր, մայրը ամուսնանում է Ռոջեր Քլինթոնի հետ: Տասնհինգ տարիների ընթացքում Բիլը վերցրել է խորթ հոր ազգանունը: Սովորել է Արկանզաս նահանգի Hot Springs քաղաքի միջնակարգ դպրոցում: Հասել է հաջողությունների ուսման և սակսաֆոն նվագելու մեջ, ցանկանում էր դառնալ պրոֆեսիոնալ երաժիշտ: Ուսանողական խմբի հետ մեկնել է Վաշինգտոն նախագահ Ջոն Քենեդիի հետ հանդիպման, իսկ դրանից հետո որոշել է զբաղվել քաղաքականությամբ:

ՋՈՐՋ ՈՒՈՔԵՐ ԲՈՒՇ ԿՐՏՍԵՐ

Ջորջ Ուոքեր Բուշ կրտսերը ծնվել է 1946 թվականի հուլիսի 6-ին Նյու Հեյվենում (Կոնեկտուտ նահանգում)՝ ծովային ավիացիայի պաշտոնաթող օդաչու Ջորջ Հերբերտ Ուոքեր Բուշի և Բարբարա Բուշի ընտանիքում: Ջորջը եղել է առաջին որդին, 1949 թվականին ծնվել է Պաուլին (մահացել է 1953 լեյկեմիայից), 1953 թվականին՝ Ջեբը, 1955 թվականին՝ Նեյլ, 1956 թվականին՝ Մարվին և 1959 թվականին Դորտին: Ջորջի պապը՝ Պրեսկոտ Շելդոն Բուշը, 1952-1963 թվականներին Կոնեկտիկուտի սենատորն էր:Բուշ կրտսերի մանկությունն անցել է Միդլենդ

քաղաքում (Տեխաս)։ Երբ Ջորջը ավարտել է 7-րդ դասարանը, նրա ընտանիքը տեղափոխվել է Հյուսթոն։ Այնտեղ Բուշը 2 տարի սովորել է «Քինքեյդ» մասնավոր դպրոցում՝ համալսարան ընդունվելու նախապատրաստման համար։ Կրթությունը սկսել է Ֆիլիպսի ակադեմիայում։ 1968 թվականին նա ստացել է պատմության բակալավրի աստիճան Եյլի համալսարանում, որտեղ սովորել է միջին, բայց օգտվել է հանրաճանաչությունից։ 1968-ից 1973 թվականներին ծառայել է Ազգային գվարդիայում։ Եղել է Տեխասի BBC Ազգային գվարդիայի F-102 ինքնաթիռի օդաչուն։

ԲԱՐԱԿ ՕԲԱՄԱ

Օբաման ծնվել է 1961 թվականի օգոստոսի 4-ին Հոնոլուլուի Կապիոլանիի կանանց և երեխաների բժշկական կենտրոնում։ Նա միակ նախագահն է, որը ծնվել է 48 սահմանակից նահանգներից դուրս։ Մայրն ամերիկացի է, իսկ հայրը՝ քենիացի։ Մայրը՝ Էնն Դանհեմը (1942-1995), ծնվել է Կանզասի Ուիչիտո քաղաքում, ունի անգլիական, ուելսական, գերմանական, շվեյցարական և իռլանդական արմատներ։ 2007 թվականին պարզվեց, որ նրա ապուպապը՝ Ֆալմութ Քիրնին, 1850 թվականին Իռլանդիայի Մոնիգալ գյուղից գաղթել է ԱՄՆ։ 2012 թվականի հուլիսին «Ancestry.com» կայքը պարզեց, որ ամենայն հավանականությամբ

Դանիեմը սերում է Ջոն Փանչի տոհմից՝ աֆրիկացի ստրուկ, որը 17-րդ դարում ապրել է Վիրջինիա գաղութում: Օբամայի հայրը՝ Բարաք Օբամա ավագը (1934–1982), սերում էր Նյանգոմա Կոգելո գյուղի լուո ժողովրդից: Ազգանունը՝ Օբաման, առաջացել է նրա լուոական ծագումից:

ԴՈՆԱԼԴ ՋՈՆ ԹՐԱՄՓ

Դոնալդ Ջոն Թրամփը ծնվել է 1946 թվականի հունիսի 14-ին Նյու Յորքի Քուինս բորոյի Ճամայկա հիվանդանոցում: Ընտանիքի չորրորդ երեխան էր: Հայրը՝ Ֆրեդ Թրամփը, ծնվել էր Բրոնքսում, կառուցապատող էր, ծնողները գերմանացի ներգաղթյալներ էին: Մայրը՝ Մերի Էնն ՄակԼաուդը, գաղթել էր Շոտլանդիայից: Թրամփը մեծացել է ավագ քույրերի և եղբոր՝ Մերիենի, Ֆրեդ կրտսերի, Էլիզաբեթի և կրտսեր եղբոր՝ Ռոբերտի հետ, Քուինսի Ճամայկա Իսթեյթս թաղամասում: Մինչև յոթերորդ դասարանը հաճախել է Քյու Ֆորիսթ մասնավոր դպրոց: 13 տարեկանում ընդունվել է Նյու Յորքի ռազմական ակադեմիա, որը մասնավոր զիշերօթիկ դպրոց էր, իսկ 1964 թվականին՝ Ֆորդհեմի համալսարան: Երկու տարի անց տեղափոխվել է Փենսիլվանիայի համալսարանի Ուորթոն դպրոց, որն ավարտել է 1968 թվականի մայիսին՝ ստանալով տնտեսագիտության բակալավրի աստիճան:

ՋՈ ԲԱՅԴԵՆ

Ջոզեֆ Ռոբինեթ «Ջո» Բայդեն կրտսերը ծնվելով Փենսիլվանիա նահանգի Սքրենթոն քաղաքում՝ Բայդենը 1953 թվականին ընտանիքի հետ տեղափոխվել է Դելավեր: Մինչև Սիրաքյուսի համալսարանում իրավագիտության դոկտորի աստիճանի ստացումը սովորել է Դելավերի համալսարանում: 1970 թվականին ընտրվել է Նյու Քասլ շրջանի խորհրդի անդամ, իսկ արդեն 1972 թվականին՝ Դելավեր նահանգից ԱՄՆ Սենատի անդամ: Երկար տարիներ եղել է Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ: Սենատորի կարգավիճակում՝ Ջո Բայդենը նախագծել և ձեռնամուխ է եղել «Բռնի հանցագործությունների դեմ պայքարի և իրավակարգի ապահովման մասին» ու «Կանանց նկատմամբ բռնության մասին» օրենքների ընդունմանը: Նա նաև ղեկավարել է ԱՄՆ Գերագույն դատարանի անդամ դառնալու մասին 6 լսումներ, այդ թվում՝ Ռոբերտ Բորկի և Քլերենս Թոմասի վիճելի լսումները:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Երկկողմ հարաբերություններ

Ընդհանուր տեղեկություններ

Ամերիկայի Միացյալ Նահանգները Հայաստանի Հանրապետության անկախությունը ճանաչել է 1991թ. դեկտեմբերի 25-ին, իսկ դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992թ. հունվարի 7-ին:

1992թ. փետրվարին ԱՄՆ-ն դեսպանություն է հիմնել Երևանում:

1992թ. մարտին ՀՀ-ն դեսպանություն է հիմնել Վաշինգտոնում:

1995թ. ԱՄՆ Լոս Անջելես քաղաքում հիմնվել է ՀՀ գլխավոր հյուպատոսությունը:

2023թ. փետրվարի 21-ին Հայաստանում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինն իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանին:

2021թ. հոկտեմբերի 1-ից ԱՄՆ-ում ՀՀ դեսպան է Լիլիթ Մակունցը:

Ամերիկայի Միացյալ Նահանգները Հայաստանի Հանրապետության կարևորագույն գործընկերներից է, որն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Հայաստանի քաղաքական և տնտեսական կյանքում: 2019թ. հայ-ամերիկյան հարաբերությունները բարձրացել են նոր՝ Ռազմավարական երկխոսության մակարդակի՝ ընդլայնելով համագործակցության ոլորտները: 2019թ. մայիսին Երևանում կայացել է ռազմավարական երկխոսության անդրանիկ նիստը: Միացյալ Նահանգների աջակցությամբ հաջողությամբ իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած

ժողովրդավարական բարեփոխումների օրակարգը՝ մասնավորապես օրենքի գերակայության հաստատման, դատաիրավական համակարգի բարելավման և կոռուպցիայի դեմ պայքարում:

1992 թվականից Հայաստանում գործում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID), որն իրականացնում է փոքր ձեռներեցության խրախուսման, էներգաջրամատակարարման կարգավորման, մարդասիրական օգնության, իրավական դաշտի բարելավման, գյուղատնտեսության և զբոսաշրջության աճի և այլ բնույթի բազմաթիվ ծրագրեր: Միացյալ Նահանգները Հայաստանին մարդասիրական և տեխնիկական օգնություն տրամադրող խոշորագույն դոնորն է:

Միացյալ Նահանգները՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկիր, ակտիվ դեր է խաղում Հարավային Կովկասի տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործում:

Իրավապայմանագրային դաշտ

Համաձայնագրեր

- Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև առևտրային հարաբերությունների մասին (ստորագրվել է 1992թ. ապրիլի 2-ին, ուժի մեջ է մտել 1992թ. ապրիլի 7-ին)
- Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև ներդրումների խրախուսման մասին (ստորագրվել է 1992թ. ապրիլի 2-ին, ուժի մեջ է մտել ստորագրման պահից)

- Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունների միջև Հայաստանի Հանրապետությունում Միացյալ Նահանգների Խաղաղապահ կորպուսի ծրագրի մասին (ստորագրվել է 1992թ. սեպտեմբերի 24-ին, ուժի մեջ է մտել ստորագրման պահից)
- Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև ներդրումների փոխադարձ քաջալերման և պաշտպանության մասին (ստորագրվել է 1992թ. սեպտեմբերի 23-ին, ուժի մեջ է մտել 1996 թ. մարտի 29-ին)
- Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունների միջև գիտության և տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության մասին (ստորագրվել է 1997թ. փետրվարի 28-ին, ուժի մեջ է մտել ստորագրման պահից)
- Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին (ստորագրվել է 2000թ. հուլիսի 24-ին, ուժի մեջ է մտել 2002թ. նոյեմբերի 25-ին)
- Հայաստանի Հանրապետության ատոմային էներգիայի օգտագործման բնագավառը կարգավորող մարմնի և ԱՄՆ միջուկային կարգավորող հանձնաժողովի միջև միջուկային անվտանգության հարցերով տեխնիկական, տեղեկատվության փոխանակման և համագործակցության համաձայնագիր (ստորագրվել է 2007թ. փետրվարին)
- Ավիացիայի անվտանգության մասին համաձայնագիր (ստորագրվել է 2007թ. հոկտեմբերին)

- Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև օդային տրանսպորտի մասին համաձայնագիր (ստորագվել է 2008թ. նոյեմբերին)
- Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև Երևանի Որակի միջազգային դպրոցի կարգավիճակի մասին համաձայնագիր (ստորագրվել է 2009թ. հոկտեմբերի 5-ին)
- Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև գիտության և տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության մասին համաձայնագիր (ստորագրվել է 2009թ. նոյեմբերի 3-ին)
- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտպանության դեպարտամենտի միջև կենսաբանական զենքերի ստեղծման մեջ օգտագործվելիք տեխնոլոգիայի, ախտածինների և փորձառության տարածման կանխարգելման ոլորտում համագործակցության մասին համաձայնագիր (ստորագրվել է 2010թ. սեպտեմբերին)
- Առևտրի և ներդրումների հայ-ամերիկյան շրջանակային համաձայնագիր (2015թ. մայիսի 7)
- Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի կիրառումը դյուրացնելուն ուղղված համագործակցության մասին համաձայնագիր (2018թ. փետրվարի 12)
- Շրջանակային համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ

Նահանգների Կալիֆորնիա նահանգի կառավարության միջև համագործակցության մասին (2019թ. սեպտեմբերի 24)

Արձանագրություններ

- Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև 2001թ. հունիսի 11-ին կնքված՝ թմրադեղերի հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության մասին նամակ-համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին (ստորագրված 2003թ. ապրիլի 14-ին և 2008թ. սեպտեմբերի 19-ին)

Հուշագրեր

- Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև հայ-ամերիկյան աշխատանքային խմբի մասին համագործակցության հուշագիր (ստորագրվել է 2000թ. հունվարի 27-ին)
- Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև սոցիալական և առողջապահական կարիքները բավարարելու բնագավառում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր (ստորագրվել է 2000թ. օգոստոսի 16-ին)
- Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև ԱՄՆ կառավարության կրթական փոխանակման ծրագրերին հայ ուսանողների մասնակցության մասին փոխըմբռնման հուշագիր (ստորագրվել է 2006թ. մարտի 3-ին)

Այլ

- Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական հիմնարկների խնամքի տակ գտնվող անձանց աշխատանքի վերաբերյալ (հայտագրերի փոխանակումը տեղի է ունեցել սեպտեմբերի 30-ին և դեկտեմբերի 30-ին, 2005թ., ուժի մեջ է մտել 2006թ. հոկտեմբերի 16-ին)

Առևտրատնտեսական կապեր

Մինչև 2019թ. Հայ-ամերիկյան առևտրատնտեսական համագործակցությունը համակարգվել է Տնտեսական հարցերով հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի (US-Armenia Task Force, USATF) կողմից, որը տարեկան գումարել է մեկ նիստ (որոշ դեպքերում այդ ժամանակացույցը խախտվել է)՝ փոխադարձաբար երկու երկրների մայրաքաղաքներում:

2019թ. հայկական կողմի առաջարկով էականորեն ընդլայնվել է երկկողմ միջկառավարական հանձնաժողովի օրակարգը, ինչով և սկիզբ է դրվել նոր ձևաչափին՝ Հայ-ամերիկյան ռազմավարական երկխոսությանը (USASD): 2019թ.-ի մայիսին Երևանում կայացել է ռազմավարական երկխոսության անդրանիկ նիստը:

2020թ. ընթացքում Ռազմավարական երկխոսության նիստերը եղել են առցանց՝ COVID-19 համավարակով պայմանավորված:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ամերիկայի Միացյալ Նահանգները և Հայկական հարցը: ԱՄՆ-ում Հայկական հարցով ու հայերով հետաքրքրվել են Թուրքիայում հայերի 1894- 1896 թթ. ջարդերից դեռևս շատ առաջ: Ամերիկա-թուրքական պաշտոնական հարաբերությունները հաստատվել են 1830 թվականի բարեկամության և առևտրի վերաբերյալ երկու երկրների միջև կնքված պայմանագրով, և նույն տարում Էլ Արտասահմանյան միսիոներների լիազորների ամերիկյան խորհուրդը որոշում է կայացրել միսիոներներ ուղարկել Կ. Պոլիս՝ տեղի հայերի մեջ աշխատանք տանելու համար: [[1846 թվականին ստեղծվել է առաջին հայ ավետարանական (բողոքական) եկեղեցին, իսկ հաջորդ տարում օսմանյան կառավարությունը բողոքականներին ճանաչել է որպես առանձին համայնք: Մինչև 1870-ական թթ. սկիզբն ամերիկյան միսիոներներն արդեն գործում էին Տրապիզոնում, Էրզրումում, Կեսարիայում, Այնթապում, Բրուսայում, Խարբերդում, Մարաշում, Դիարբեքիրում, Բիթլիսում, Վանում և այլուր:

1914 թվականին հիշյալ վայրերում կար 174 միսիոներ, որոնց օգնում էին ավելի քան 1200 տեղացի հայ, բացվել էր 137 եկեղեցի: Ամերիկյան ուսումնական հաստատությունները դարձել էին լուսավորության կարևոր կենտրոններ Օսմանյան կայսրությունում: Այդ հաստատությունների դռները բաց էին բոլորի առջև, բայց սովորողների գերակշիռ մասը հայերն էին: Գործում էր ավելի քան 400 ամերիկյան վարժարան, որոնց թվում՝ 8 քոլեջ, 3 ճեմարան, 46

միջնակարգ դպրոց։ Բացի այդ ամերիկացիներ էին աշխատում 9 հիվանդանոցներում ու 10 դիսպանսերներում, որոնք հիմնականում սպասարկում էին հայերին։ Ամերիկյան միսիոներները գործում էին բարդ իրապայմաններում. մի կողմից նրանք ձգտում էին հայերի մեջ տարածել ամերիկյան հեղափոխության սկզբունքները՝ հավասարություն ու ազատություն, մյուս կողմից նրանք դեմ էին հայ քաղաքական շարժումներին, որոնք ձգտում էին միևնույն նպատակին։ Ամերիկյան միսիոներները երկյուղում էին, որ հայերի դիմադրությունը Օսմանյան կայսրության բռնություններին կարող էր վնասել իրենց իսկ հայերին և վտանգել ամերիկյան միսիոներների գործունեությունը։

ԱՄՆ-ի համար հայկական հարցը, նախ և առաջ, եվրոպական խնդիր էր։ Հենց եվրոպական տերություններն էին կնքել 1878 թվականի Բեռլինի դաշնագիրը, որը ռուսական բանակին ստիպել էր հայկական բարենորոգումների անորոշ հավաստիացումներով հեռանալ Արևմտյան Հայաստանի զբաղեցրած տարածքներից։ Հենց եվրոպական տերություններն էին գաղտնի պայմանագիր կնքել Օսմանյան կայսրության անդամահատման վերաբերյալ։ Եվ ամերիկյան տեսակետից, եվրոպական տերություններն էլ պետք է իրենց միջազգային պարտքը կատարեին հայ ժողովրդի հանդեպ։ Հայկական հարցի վերաբերյալ ամերիկյան կառավարությունը ղեկավարվում էր եվրոպական գործերին չմիջամտելու՝ Մոնրոյի հայտնի ուսմունքով։ Բայց չմիջամտելու քաղաքականությունը չէր նշանակում անտարբերություն հայկական հարցի նկատմամբ։ Ընդհակառակը, հայկական ողբերգությունը, ավելի քան որևէ այլ իրադարձություն արտասահմանում, արթնացրեց ամերիկյան հանրային խիղճը և ծնունդ տվեց երկրում մասնավոր բարեգործության հզոր շարժման։ Դա ուղեկցվում էր հոգուտ հայերի զանգվածային ցույցերով, բանաձևերով ու այլ հանրահավաքներով։

Ամերիկյան հասարակայնության շատ հայտնի ներկայացուցիչներ հայերին օգնելու համար հիմնում էին տարբեր կազմակերպություններ, իսկ ԱՄՆ-ի կառավարությունը, չնայած այդ ամենին, խուսափում էր հեռուն գնացող քաղաքական պարտավորությունների ստանձնումից:

Ամբողջ Օսմանյան կայսրությունով մեկ ցրված լինելու հանգամանքն ամերիկյան միսիոներներին հնարավորություն էր տալիս ականատես լինել Սասունի 1894- 1896 թթ, ջարդերին, արևմտյան Հայաստանի 1894 թվականի կոտորածներին, Կիլիկիայի 1909 թվականի և 1915-1923 թթ.Մեծ եղեռնի իրադարձություններին: Նրանց հաղորդումներն ու կոչերը խիստ ազդեցություն էին գործում ամերիկյան հասարակական կարծիքի վրա և երբեմն-երբեմն ամերիկյան կառավարությանը հարկադրում հանդես գալ հօգուտ հայերի՝ ամերիկացիների կյանքի ու գույքի պաշտպանության պատրվակով: Սասունի ջարդերից (1894) հետո ԱՄՆ-ի սենատը լուրջ մտահոգություն հայտնեց թուրքերի գազանությունների կապակցությամբ, իսկ պետական դեպարտամենտն ապարդյուն փորձում էր հասնել այն բանին, որպեսզի ամերիկյան հյուպատոսության ներկայացուցիչը ուղեկցի տեղում հետաքննություն անցկացնող հանձնաժողովին: Այնուհետև ԱՄՆ-ն առաջարկեց նոր հյուպատոսարաններ բացել Էրզրումում ու Խարբերդում, որոնք և բացվեցին 1898 թվականին և 1901 թվականին՝ հակառակ օսմանյան կառավարության և Աբդուլ Համիդ II-ի դիմադրությանը: 1894-1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ ԱՄՆ-ի կոնգրեսը հավանություն տվեց մի քանի բանաձևերի, որոնք եվրոպական տերություններին կոչ էին անում պաշտպանել հայերին՝ իրենց ստանձնած պայմանագրային պարտավորությունների համաձայն: ԱՄՆ-ի պրեզիդենտ Գ. Քլիվլենդը պնդում էր, որպեսզի Բեռլինի դաշնագիրը ստորագրած

պետությունները լուծեն հայկական հարցը: Չնայած ԱՄՆ-ում իշխող ուժեղ հակաթուրքական տրամադրություններին, հատկապես 1894-1896 թթ. հայկական կոտորածներից հետո, հաջորդ ամերիկյան վարչակազմերը շարունակում էին հավատարիմ մնալ Մոնրոյի ուսմունքին: 1909 թվականին ամերիկյան մամուլը տպագրեց մի շարք հաշվետվություններ Կիլիկիայում հայերի ջարդերի մասին:

1915- 1923 թթ., ամերիկացիները, որպես չեզոք երկրի ներկայացուցիչներ, դարձան Օսմանյան կայսրության հայերի ցեղասպանության վկաներ, նրանց համար ակնհայտ էր այդ հանցագործության կազմակերպված բնույթը: Ամերիկյան միսիոներների և պաշտոնատար անձանց վկայությունները, հաշվետվությունները շուտով հայտնի դարձան արտասահմանում և վրդովեցին հանրային խիղճը: Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուից պահանջվում էր պաշտոնական չեզոքություն պահպանել, սակայն նա ջանքեր էր գործադրում Կոստանդնուպոլսի դիվանագիտական կորպուսին դրդելու միջամտել ի պաշտպանություն հայերի: Նա փորձում էր երիտթուրքական պարագլուխներ Էնվերին ու Թալեաթին համոզել, որ նրանց հակահայկական քայլերը գրգռում են ամերիկյան հանրային կարծիքը, ինչը բացասաբար կազդի թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա: Մորգենթաուն ջանում էր ներազդել նաև Կոստանդնուպոլսի գերմանացի դեսպանի վրա: 1915 թվականի հուլիսի 10-ին ամերիկյան դեսպանը զեկուցում էր պետական դեպարտամենտին, որ հայերի հալածանքներն «աննախադեպ չափեր» են ընդունել, իսկ մի քանի օր անց հայտնում էր, որ «հայ ազգի ոչնչացման» ծրագիրը իրականացվում է ամենայն հետևողականությամբ: Նա նույնիսկ առաջարկում էր ֆինանսավորել կես միլիոն հայերի վերաբնակեցումը ԱՄՆ, բայց պետական դեպարտամենտը պատասխանել էր, որ դա գործնական

չէ: Սակայն ոչ Մորգենթաուն, ոչ էլ պետական դեպարտամենտը չառաջարկեցին ռազմական միջամտություն՝ հայկական կոտորածները դադարեցնելու համար:

Անկարող լինելով կասեցնել հայերի տեղահանություններն ու կոտորածները՝ ամերիկացիները փորձում էին օգնության ձեռք պարզել եղեռնից փրկվածներին: Ազդեցիկ մարդասերներն ու միսիոներները Քլիվլենդ Դոշի և Ջեյմս Բարտոնի գլխավորությամբ կազմեցին Հայ օգնության կոմիտե, որն ավելի ուշ վերակազմավորվեց Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի (Ամերկոմ). այդ կազմակերպությունը նշանակալի օգնություն ցույց տվեց հայերին, հատկապես պատերազմից հետո:

ԱՄՆ-ի Գերմանիայի դեմ պատերազմի մեջ մտնելուց (1917 թվականի ապրիլ) հետո թուրքական կառավարությունը դիվանագիտական հարաբերությունները խզեց ԱՄՆ-ի հետ, բայց ամերիկյան շատ միսիոներներ, վտանգելով իրենց կյանքը, մնացին Թուրքիայում և շարունակեցին իրենց աշխատանքը: ԱՄՆ-ի կառավարությունը որոշեց պատերազմ չհայտարարել Թուրքիային, որը ինչ-որ չափով նպաստավոր եղավ հայերին օգնելու համար, բայց հետագայում քաղաքական լուրջ խոչընդոտ դարձավ Մերձավոր Արևելքի հետպատերազմյան կարգավորմանը ԱՄՆ-ի մասնակցելուն:

Երբ պարտված Օսմանյան կայսրությունը ստորագրեց 1918 թվականի Մուդրոսի զինադադարը, ամերիկյան շատ նշանավոր գործիչներ պաշտպանեցին հայերի պահանջը, որպեսզի ԱՄՆ-ն ու եվրոպական դաշնակիցները օկուպացնեն Արևմտյան Հայաստանը, կանխեն այդ վայրերը իսլամադավան գաղթականներով բնակեցնելու թուրքական փորձերը՝ մինչև հաշտության կոնֆերանսը կորոշեր Հայաստանի ապագան: ԱՄՆ-ի կոնգրեսը ընդունեց նաև բանաձև, որը կոչ էր անում ստեղծել միացյալ

հայկական պետություն (Կիլիկիայից մինչև Հայաստանի արևելյան նահանգները)։ Պատերազմից հետո ԱՄՆ-ը հաճախ էր խորհուրդ տալիս եվրոպական դաշնակիցներին, թե ինչ պետք է անել Հայաստանի համար, սակայն ինքը, մարդասիրական օգնությունից զատ, պատասխանատվության որևէ բաժին չէր ստանձնում։ 1919-1920 թվականների Փարիզի հաշտության կոնֆերանսում պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը քանիցս կարեկցել է հայերին և ցանկություն հայտնել, որպեսզի ամերիկյան կոնգրեսը ստանձնի Հայաստանի խնամակալությունը կամ մանդատը՝ Ազգերի լիգայի հովանու ներքո։ Սակայն Հայաստանի մանդատի հնարավորությունները գնալով նվազել են, քանի որ Թուրքիայի հետպատերազմյան կարգավորման հարցը ձգձգվել է, իսկ եվրոպական տերությունները կատաղի վեճեր են բացել ռազմական ավարի բաժանման շուրջը (տես Հայաստանի մանդատ 1920)։ Հետևելով Մոնրոյի ուսմունքին՝ ԱՄՆ-ի սենատը մերժել է Գերմանիայի հետ կնքված Վերսալյան պայմանագիրը, որի հետ նաև՝ Ազգերի լիգային վերաբերող պայմանագիրն ու մանդատների համակարգը։

Անդրկովկասում վերսկսված հայերի կոտորածների և այդ շրջաններից անգլիական զորքերի հետ քաշվելու լուրը ԱՄՆ-ի պետական դեպարտամենտին ու հայամետ շատ կազմակերպությունների դրդեց (1919 թվականի աշնանը) փորձել համոզելՄեծ Բրիտանիային հետաձգել իր զորքերի դուրս բերումն այնտեղից։ Միաժամանակ Վուդրո Վիլսոնը Կոստանդնուպոլսի նոր կառավարությանը նախազգուշացրեց, որպեսզի նա կանխի հետագա դժվարությունները հայերի նկատմամբ, այլապես պրեզիդենտը սպառնում էր հետ վերցնել թուրք, գերիշխանությունը Անատոլիայի թուրքական մասերի վրա պահպանելու իր պարտավորությունը։ Սակայն ԱՄՆ-ը սպառնալիքից այն կողմ

չանցավ։ 1919 թվականի սեպտեմբերին սենատում քննարկվեց մի օրինագիծ, որը պրեզիդենտին լիազորում էր Հայաստան ուղարկել զինված ուժեր՝ մինչև հաշտության պայմանագրի կնքումը, և զենք մատակարարել հայկական բանակին։ Միջազգային հարաբերությունների սենատական կոմիտեի ենթահանձնաժողովը լսեց բազմաթիվ վկաների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ Հովհաննես Քաջազնունուն, որոնք պաշտպանում էին բանաձևը։ Եվ երբ բանաձևը ներկայացվեց սենատի լրակազմ նիստին (1920 թվականի մայիս), այն աստիճան բովանդակազրկված էր, որ կորցրել էր իր սկզբնական իմաստը, այժմ արդեն բանաձևը պարզապես ողջունում էր Հայաստանի Հանրապետությունը ԱՄՆ-ի կողմից դե ֆակտո ճանաչելու առթիվ (1920 թվականի ապրիլի 23) և հույս էր հայտնում, որ հայ ժողովրդի ազգային իղձերը կիրականանան։ Բանաձևի միակ քիչ թե շատ իրական նշանակությունն այն էր, որ պրեզիդենտը պահանջում էր անհրաժեշտության դեպքում Սև ծով]]ի նավահանգիստներ ուղարկել ռազմանավեր ու ծովային հետևակ՝ պաշտպանելու ամերիկացիների կյանքն ու սեփականությունը։ Այս իմաստազուրկ բանաձևի ընդունմանը (1920 թվականի մայիսի 15) հաջորդեց Հայաստանի մանդատը ստանձնելու համար իրեն լիազորություններ տալու Վուդրո Վիլսոնի առաջարկի մերժումը (հունիսի 1-ին) սենատի կողմից։

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից մեկ տարի անց պետական դեպարտամենտը եվրոպական դաշնակիցներին տեղեկացնում էր, որ չի միջամտելու Թուրքիայի խաղաղ կարգավորման գործերին։ Այդ ժամանակ եվրոպական տերություններն արդեն պայմանավորվել էին ենթադրվող հայկական պետության տարածքը կրճատելու շուրջ՝ նրա մեջ մտցնելով միայն Տրապիզոնի, Բիթլիսի, Էրզրումի և Վանի

նահանգների մի մասը։ Դաշնակիցները պրեզիդենտ Վիլսոնին կոչ արեցին ստանձնել Հայաստանի մանդատը և, բոլոր դեպքերում, որոշել Հայաստանի վերջնական սահմանները չորս նահանգների շրջանակներում։ Վիլսոնը չկարողացավ ստանձնել մանդատը, բայց նա համաձայնեց իրավարար լինել հայկական սահմանների հարցում։ Եզրափակիչ հաշվետվությունը, որի համաձայն նախկին Օսմանյան կայսրությունից մոտ 100 հազար կմ 2 անցնում էր նոր հայկական պետությանը, Եվրոպա հաղորդվեց 1920 թվականի նոյեմբերին (տես Վիլսոնի իրավարարական պայմանակարգ)։ Բայց այդ որոշումն այլևս նշանակություն չուներ, քանի որ Մուստաֆա Քեմալի զորքերն արդեն անցել էին ռուս-թուրքական սահմանը և սպառնում էին բուն Հայաստանի Հանրապետության գոյությանը, որի մի մասում հաստատվեց (1920 նոյեմբերի 29) խորհրդային իշխանություն։

Թուրքական ազգայնականների հաջողությունը եվրոպական դաշնակիցներին հարկադրեց համաձայնել 1920 թվականի Սևրի հաշտության պայմանագրի՝ վերանայմանը, որի համաձայն (ի թիվս այլ հարցերի), ստեղծվում էր հայկական միասնական պետություն։ ԱՄՆ-ը 1922-1923 թթ. Լոզանի կոնֆերանս ուղարկեց իր դիտորդներին, բայց նրանք չպաշտպանեցին նույնիսկ Թուրքիայում «Հայկական ազգային օջախ» հիմնելու գաղափարը. Եվրոպական դաշնակիցները շատ շուտով հրաժարվեցին այդպիսի «օջախ» ստեղծելու փորձից և, բավարարվելով ազգային փոքրամասնությունների մասին ընդհանուր հոդվածներով, որտեղ հիշատակություն անգամ չկար Հայաստանի և հայերի մասին, ստորագրեցին Լոզանի պայմանագիրը։ Հետագա տարիներին, ԱՄՆ-ը, որ խոսքերով ընդունում էր հայ փախստականների օրինական իրավունքը՝ վերադառնալ իրենց հայրենի տները, և արդարության կոչ էր անում, որևէ գործնական քայլ չկատարեց։ Ու. Հարդինգի, Կ.

Կուլիջի վարչակազմերը երես դարձրին հայկական հարցից և հիմնականում մտահոգված էին Թուրքիայի հետ իրենց հարաբերությունների կարգավորմամբ: Բայց ամերիկյան հասարակայնության շրջանում դեռևս ուժեղ էին հակաթուրքական տրամադրությունները: Այդ իսկ պատճառով էլ ԱՄՆ-ի կողմից քեմալական Թուրքիայի ճանաչումը ձգձգվեց մինչև 1927 թվականի հոկտեմբեր: Թուրքիայի հայ բնակչության վերացմամբ ամերիկյան միսիոներները զրկվեցին իրենց մարդասիրական առաքելությունը այդ երկրում շարունակելու հնարավորությունից. շուտով նրանք էլ վտարվեցին Թուրքիայից: Մերձավոր Արևելքի օգնության կոմիտեն մինչև 1930-ական թթ. սկիզբը շարունակում էր գործել Խորհրդային Հայաստանում, վերջին ամերիկացիները ևս հեռացան Հայաստանից՝ այդպիսով ավարտելով ԱՄՆ-ի ավելի քան հարյուրամյա ներգրավումը հայկական գործերում ու Հայկական հարցում:

Հայկական հարցը վերստին ԱՄՆ-ի պաշտոնական շրջանների ուշադրությունը գրավեց 1970-1980-ական թթ., երբ ուժեղացավ համաշխարհային հասարակայնության հետաքրքրությունը Հայկական հարցի և հայերի ցեղասպանության հանդեպ, ինչն իր արտահայտությունը գտավ միջազգային տարբեր կազմակերպություններում, գիտաժողովներում ու հասարակական համաժողովներում Հայկական հարցի և հայերի ցեղասպանության փաստի քննարկումներում: Հատկապես 1980-ական թթ. ԱՄՆի կոնգրեսը քանիցս անդրադարձել է Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության ճանաչման հարցին, բայց համապատասխան բանաձևերի ընդունումը միշտ խափանվել է հարցի քննարկման տարբեր փուլերում (վերջին անգամ 1990 թվականի սկզբին): Վճռական պահին բանաձևին դեմ են արտահայտվում պետական դեպարտամենտն ու պաշտպանության

նախարարությունը, որոնք քաղաքական և ռազմավարական նկատառումներով տեղի են տալիս թուրքական կառավարության ճնշմանը:

ԱՄՆ-Ի ԿՈՂՄԻՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ

Միացյալ Նահանգների նախագահ Ջո Բայդենը պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը՝ այդ եզրույթը երկու անգամ օգտագործելով իր ապրիլքսանչորսյան ուղերձում:

«Ամեն տարի այս օրը մենք հիշում ենք նրանց, ովքեր զոհվեցին Օսմանյան ժամանակաշրջանի Հայոց ցեղասպանության ժամանակ, և պարտավորվում ենք կանխել նման չարագործությունների կրկնությունը», - հայտարարել է Բայդենը՝ այդպիսով դառնալով Ամերիկայի առաջին նախագահը, որը 1915 թվականին մեկուկես միլիոն հայերի սպանություններն անվանեց Ցեղասպանություն:

«1915 թվականի ապրիլի 24-ից սկսած օսմանյան իշխանությունների կողմից Կոստանդնուպոլսի հայ մտավորականության և համայնքի առաջնորդների ձերբակալություններից հետո, մեկուկես միլիոն հայեր տեղահանվեցին, կոտորվեցին կամ մահվան ուղարկվեցին՝ բնաջնջման նպատակով: Մենք ոգեկոչում ենք Մեծ եղեռնի զոհերին, որպեսզի նախկինի սարսափները երբեք կորսված չլինեն պատմության համար: Եվ մենք հիշում ենք, որպեսզի մշտապես զգոն մնանք ատելության կործանարար ազդեցության դեմ

պայքարում՝ դրա բոլոր դրսևորումներում», - հայտարարել է Միացյալ Նահանգների 46-րդ նախագահը՝ դառնալով նաև Սպիտակ տան առաջին և միակ ղեկավարը, որը կատարեց 106 տարի առաջ Ցեղասպանությունից փրկվածների սերունդներին տրված խոստումը՝ նախագահ դառնալու դեպքում պաշտոնապես ճանաչել Հայոց ցեղասպանությունը և մարդու իրավունքները դարձնել իր վարչակազմի առաջնահերթությունը:

«Վերապրածներից շատերը ստիպված եղան նոր տներ և նոր կյանք գտնել աշխարհով մեկ՝ այդ թվում Միացյալ Նահանգներում: Ուժով և տոկունությամբ՝ հայ ժողովուրդը վերապրեց և վերստին կառուցեց իր համայնքը: Տասնամյակներ շարունակ հայ ներգաղթյալները հարստացրել են Միացյալ Նահանգներն անհաշիվ եղանակներով, բայց երբեք չեն մոռացել ողբերգական պատմությունը, որը բերեց նրանց նախնիներից այնքան շատերին դեպի մեր ափերը: Մենք հարգում ենք նրանց պատմությունը: Մենք տեսնում ենք այդ ցավը: Մենք հաստատում ենք պատմությունը: Մենք դա անում ենք ոչ թե մեղադրելու, այլ ապահովելու համար, որ կատարվածն այլևս չկրկնվի», - շեշտում է ԱՄՆ նախագահն իր ուղերձում:

«Այսօր, երբ մենք ողբում ենք մեր կորուստները, եկեք մեր հայացքը հառենք ապագային և պատկերացնենք այն աշխարհը, որն ուզում ենք ստեղծել մեր երեխաների համար: Մի աշխարհ, որն աղտոտված չէ մոլեռանդության և անհանդուրժողականության ամենօրյա չարիքներով, աշխարհ, որտեղ մարդու իրավունքները հարգված են, և որտեղ բոլոր ժողովուրդները կարող են ապրել արժանապատիվ ու անվտանգ կյանքով: Եկեք վերահաստատենք ապագայում վայրագությունները կանխելու մեր հաստատակամությունը՝ աշխարհի որ անկյունում էլ լինի: Եվ եկեք

հասնենք աշխարհի բոլոր ժողովուրդների հաշտեցմանն ու ցավերի ամոքմանը:

Ամերիկայի ժողովուրդը ոգեկոչում է բոլոր հայերին, որոնք իրենց կյանքն են կորցրել 106 տարի առաջ այս օրը տեղի ունեցած Ցեղասպանության հետևանքով», - ընդգծել է Սպիտակ տան ղեկավարը՝ նույն ուղերձում երկրորդ անգամ օգտագործելով Ցեղասպանություն եզրույթը:

Հիշեցնենք՝ Միացյալ Նահանգների օրենսդիր մարմնի՝ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը և Սենատը 2019 թվականի դեկտեմբերին ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Նախագծային աշխատանքի ղեկավարներ՝	Գրիգորյան Լիանա, Ղուլյան Օլյա	
Աշակերտներ՝	Հակոբյան Հասմիկ	7-րդ «Բ»
	Աբրահամյան Նանա	7-րդ «Բ»
	Մուրադյան Ալեն	7-րդ «Բ»
	Սարյան Նանե Կարենի	7-րդ «Բ»

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարան
- ՀՀ ԱԳՆ, https://www.mfa.am/hy/bilateral-relations/us
- ԱՄՆ–ի նախագահները՝ փաստերով, մետրերով և ինտելեկտի մակարդակով, https://armeniasputnik.am/20170124/amn-naxagah-paster-6161724.html

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

№	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԷՋ
1	Նախաբան	1
2	ԱՄՆ-ի նախագահների ցանկը	6
3	ԱՄՆ-ի նախագահների կենսագրությունը	11
4	Ամերիկայի Միացյալ Նահանգները և Հայաստանը	52
5	Ամերիկայի Միացյալ Նահանգները և Հայկական հարցը	58
6	ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը	67
7	Նախագծային աշխատանքի մասնակիցները	70
8	Գրականություն	71